№ 55 ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 14

1907

ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի. առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊԵԿՈՎ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». Базарная ул. д. Тамамшева № 16. Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են խրաքանչիւր տողատեղին 10 կօպէկ.

Տէլէֆօն № 253.

ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 14 № 55

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՄՇԱԿ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՅ **1907** ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(35-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., մէկ ամսվանը 1 ռուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլար. Եւրօպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։ Մտորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ կարելի է վճարել ՄԱՍ-ՄԱՍ։

Կայարութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակները և ծրարները ուղարկելիս, պէտք է դնել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է 1907 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

„ՅՈՒՇԱՐԱՐ“

Թատերական-գրական-գեղարուեստական

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԵՐԿՇԱԲԱԹԹԵՐԹԻ

Թերթիս աշխատակցելու են հայ գրական-գեղարուեստական աշխարհի բոլոր յայտնի ներկայացուցիչները։ Թերթի նպատակն է ծանօթացնել և տարածել գեղարուեստի գաղափարը հասարակութեան զանազան խաւերում, օժանդակել նրա ճշտիւ ըմբռնմանը և ամեն կերպ նպաստել գաւառական բեմերի զարգացման։ Այս տարի տալու է 18 համար բազմաթիւ պատկերներով և 9 հատ ընտիր պիեսներ, որոնց, առանց դժուարութեան, ամեն տեղ կարելի է ներկայացնել։ Տարեկան բաժանեգին է 5 ռ., արտասահման 6 ռ. կամ 3 դօլար։ Բաժանեգինը կարելի է վճարել մաս առ մաս. սկզբից 3 ռ. և ապա իւրաքանչիւր ամսի սկզբին մի ռուբլի մինչև մայիս։ Թիֆլիսում բաժանորդ գրվել կարելի է 1) «Դուստնեռերգ» գրավաճառանոցում, 2) «Փարոս» քիօսկում, 3) խմբագրատանը, Սերգիեվսկայա № 3, ուր դիմելու են օտար քաղաքացիք։

Խմբագիր-հրատարակիչ՝ օր. Մարիամ Մեհրաբեան

առ. 4—25

ՄԱՍՆԱԳԷՏ ԶԻՆԻՈՐԱԿԱՆ ԲԺԻՇԿՆԵՐԻ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԵՐԹԵՒԵԿ ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մեծ-Վանքի փողոց, № 5, ոչ հեռու Ալէքսանդրեան այգուց.

Վճարն է խորհրդի համար 50 կօպ.

Հեռախօս № 481.

Ընդունելութիւնը առ. ժ. 11—5 ժ. եր.

Բժ. Տ. Ի. ՐՈՒԴԷՆԿՕ.—Ներքին հիւ. հինգշ., կիր. 3—4 ժամ.

Բժ. Ֆ. Վ. ԶՈՒՐՆՕՎՍԿԻ.—Վիրաբուժ. հիւ. երկ., ուրբ. 2—3 ժ.

Բժ. Մ. Ի. ԵԱՆԶԷԼՎՍԿԻ.—Ականջի, քթի և բերանի, շաբաթշ., ուրբ. 2—3 ժ., երեքշ., կիր. 3—4 ժ.։

Բժ. Վ. Վ. ՎԼՈՒՌՕՎ.—Վիրաբուժ., մկրատեռ. երկ., հինգ., շաբ. և կիր. 2—3 ժ.

Բժ. Ն. Մ. ԱՍԳԻՍՕՎ.—Քթի, բերանի և ականջի, երկ. քեռ. և շաբ. 1—2 ժ., հինգ., կիր., 12—1 ժ.

Բժ. Վ. Գ. ԲՕԺՕՎՍԿԻ.—Ներքին հիվանդով ամենայն օր 4—5 ժ.

Բժ. Ա. Ն. ՏԵՏՐԱՋԷ.—Կաշուի, վեներ. ամենայն օր 1—2 ժ.

Բժ. Ա. Տ. ԲՕԶՄԱԻԿՍԿԻ.—Երեխ., երկ., շաբաթ 4—5 ժ., երեք. շաբ. 3—4 ժ.։

ԵՐՄՈՒԼԱՅԵՎ.—Երեխայոց ամեն օր 12—1 ժ.

ԿՈՒՏԵՎ.—Զրպարտ, երեքշ., հինգշ. շաբ. 12—1 ժ.

ԳՕՐԱԼԵՎԻՉ.—Ներքին, ամեն օր 12—1 ժ.

ՊԱՎԼՈՎԱՅԻՑ.—Վիրաբուժ. ամեն օր 12—1 ժ.

ՄՕՆՍԷ.—Երեխ. երեքշ., հինգշ. շաբ., 4—5 ժ.

Բժ. Ն. Ի. ՆԷՌՈՒՄԻՆ.—Ականջի, երկ., ուրբ., 12—1 ժ.

Բժ. Ա. Ա. ՆՈՎԻՑԿԻ.—Կանանց, երեխ., ամեն օր, բացի կիր. օրերից 1—2 ժ.

Բժ. Զ. Ֆ. ՆԵԶԱՕՐՕՎ.—Ատամի հիւ. 11—5 ժ. ամենայն օր.

Բժ. Կ. Մ. ՊԻՎԱՐՍԿԻ
Բժ. Կ. Ի. ԶՈՒՐՆՕՎՍԿԻ } Կլինիքական անալիզ

Բժ. Գ. Ի. ՕՆՕՇԿՕ.—Բժշկ. զիմն. մասաժ, երեքաբ. 4—6 ժամ.

Մ. Ե. ԳՕՐՕԲՑՕՎԱ.—Մասաժ. ամեն օր 11—5 ժ.

Ս. ԵԱ. ՊԱՒԼՕՑԿԻ.—Վիրաբ. 12—1 ժ. ամենայն օր, կիրակի օրը 4—5 ժ.

Բժ. Կ Գ, ԳՕՐԱԼԵՎԻՉ.—Ներքին հիւանդ. ամեն օր 1—2 ժամը։

Բժ. Ա. Ա. ՄՕՆՍԷ.—Երեխ., երեքշ. հինգշ. շաբ. 4—5 ժամը։

ԵՐՄՈՒԼԱԵՎ.—Ներքք. երեխ. ամեն օր 11—12 ժ.։

ԿՈՒՏԵՎ.—Զրպարտ. երեքշ. հինգշ. կիր. 12—1 ժ.

Բժշկական խորհուրդներ, մասաժ, սրսկել, անդամահատել, անալիզի ենթարկել, հիվանդել, ատամների և ծառանների քննելը—ըստ համաձայնութեան։

առ. (չ. ու.) 81—144

ԲԺԻՇԿ

Տ. Ա. Իսահակեան

ՄԱՍՆԱԳԷՏ

Ներքին եւ վեներական

հիւանդութիւնների

Ընդունելութիւն { առաւօտ. 10—12 ժ. երեկոյեան 5—7 ժ.

Սօլոլակ, Սերգիեվսկայա 15, Փրիդօնովի տանը։

առ. (չ.ու.չ.) 51—100

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ

ՀԱՄԱՐՆԵՐ

„ՎԻԿՏՈՐԻԱ“

Թիֆլիսի կենտրոնում, Դվօրցօվայա փողոցի վրա, Փոխարքայի պալատի այգուն կից։ 40 համարները գեղեցիկ կերպով կահաւորված են և ունեն ամեն տեսակ յարմարութիւններ իջևանողների համար։

Օրական վարձը 60 կօպ. սկսած 4 ռուբլի. ամսական վարձողներին զիջումն կը լինի։ Ծառաները վստահելի և քաղաքավարի են։

Ընտանիքով եկողներին տրվում է խոհանոցը և լուացքի տեղը ձրի։ Ունի սեփական ճաշարան։

ՏԱՌ ԵՒ ՍԱՌԻ ՎԱՆՆԱՆՆԵՐ

Ելեքտրական լուսաւորութիւն։ Հեռախ. №1033

Համբարձում Եսայեանց

(չ.գ.) ա 10—10

ԲԺԻՇԿ

Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

ՄԱՍՆԱԳԷՏ

սիֆիլիս, միզային, վեներական եւ մորթու.

հիւանդութիւններից։

Ընդունում է ցերեկ. 1—3 ժ., երեկ. 6—8 ժ.։

Սօլոլակ, Բեհբութեան փող. № 33։

(ա. օ.) առ. 17—100

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ռամկավարական հողի վրա. Վերջին տեղեկութիւններ. Պետական Դումայ. Մամուլի Ներկայացուցիչների երկրորդ ընդհանուր ժողովը. Պետական Դումայի շուրջը. Մամուլ. Մերժեցին. Գօլդենբոգեվ. Դեկլարացիայի մասին կօգնները շատ շատ են. Մայրաքաղաքի կեանքից. Պակերեանդէսը Զուբալովի անունով կատարված ժողովրդական տան մէջ. Թատրօն և երաժշտութիւն. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր. Արտաքին տեսութիւն. Նամակ Պարկատանից. արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՌԱՄԿԱՎԱՐԱԿԱՆ ՀՈՂԻ ՎՐԱ.

I

Ցաճախ վիճաբանութեան առարկայ է ներկայումս դասակարգային շահերի պաշտպանութեան հարցը։

Քաղաքական մի քանի կուսակցութիւններ առանձին ինքնագոհութեամբ ընդգծում են, որ նրանք կանգնած են դասակարգային հողի վրա։ Այդ բաւական չէ, նրանք ամենախիստ կերպով յարձակվում են այն կուսակցութիւնների վրա, որոնք դասակարգային չեն։

Պէտք է յայտնենք, որ ոչ դասակարգային հայեցակէտներով ենք ղեկավարվում և մենք։

Մենք մեր գործունէութեան ամենամեծ մասը նուիրել ենք գիւղացիութեան և աշխատել ենք պաշտպան լինել գիւղացու, արհեստաւորի և բանւորի շահերին։

Մեր ժողովրդի 85%-ը կազմում է գիւղացիութիւնը և մենք նուիրել ենք այդ գիւղացիութեանը մեր ուշադրութեան, ժամանակների և գործունէութեան մեծագոյն մասը։

Մնացած 15%-ի նշանաւոր մասն էլ կազմված է զարձեալ իրանց աշխատանքով ապրող տարերից, որոնց դատը մշտական համակրութիւն է գտել մեր կողմից տարիների ընթացքում։

Նոյնը կը լինի և ապագայում։

Մենք միշտ մաքառել ենք վաշխառութեան, հարստահարութեան և կեղեքումների դէմ, այնուամենայնիւ մենք կանգնած չենք եղել դասակարգային հողի վրա և չենք յայտարարել, թէ անտեսական, քաղաքական և հասարակական հարցերը ըմբռնելի են մեզ համար միայն այնքան, որքան նրանք ծառայում են այս կամ այն դասակարգային շահերին։

Մենք ունեցել ենք ռամկավարական, ժողովրդասիրական հայեացքներ, բայց չենք ընդունել դասակարգային տեսակէտը։

II

Մեզ համար բոլորովին հասկանալի է, երբ, օրինակ, բանւոր մարդը ձգտում է իւրացնել դասակարգային գիտակցութիւն և պաշտպանել իր արդարացի պահանջները։ Բանւորը պարտաւոր է նոյնիսկ այդպէս լինել և թոյլ չը տալ, որ կապիտալը ճնշէ ու խեղդէ աշխատաւորին։

Նոյնպէս հասկանալի է, երբ կալուածատէրերը, գործարանատէրերը և դրամատէրերը նպատակ դնելով պաշտպանել իրանց շահերը, առաջ են մղում իրանց դասակարգային գիտակցութեան հարցերը։

Բանւորները, աշխատաւորները թանգ են մեզ համար, իբրև աշխատանքի ներկայացուցիչներ։ Նրանց բարօրութիւնը ժողովրդական մեծ զանգուածի բարօրութիւնն է։

Գործարանատէրը կամ դրամատէրը հետաքրքրական են միայն այնքան, որքան նրանք նպաստում են արդիւնադործութեան և կուլտուրային։ Եւ եթէ վաղը, միւս օրը բանւորական մասսաները կարողանան իրանք կազմակերպել արդիւնադործութիւնը, նրանք, անշուշտ, կիւրացնեն և այն պատմական դերը, որը ներկայումս գտնվում է դրամատէրի ձեռքին։

Այդ ցանկալին դեռ գոյութիւն չունի. աշխատաւորները դեռ թոյլ են արդիւնադործութեան ձեռնարկութիւններ իրադործելու համար և որոշ ժամանակ է պահանջվում պատմական այդ շրջանը մտնելու։

Եւ մինչոյն ժամանակ մեր առաջ դրված են ոչ միայն զործարանական այլ և ուրիշ շատ տեսակի աշխատաւորների հարցեր և մի շարք ընդհանուր հասարակական և ժողովրդական խնդիրներ։

Սղմել ու կծկել բոլոր մարդկային դործառնութիւնները և մեր ամբողջ քաղաքական ու հասարակական կեանքը դասակարգային պայքարի մէջ, վերածել քաղաքակրթութեան բաղդրեալ խնդիրներն ու պահանջները և պետական ուժը կեանքը միայն հակադիր անտեսական շահերի՝ այդ մենք չենք ընդունում։

Ճիշտ է, մեր գլխաւոր հոդածութեան առարկան աշխատաւորն է գիւղում թէ քաղաքում, բայց դրա համար հարկաւոր չէ լինել դասակարգային հողի վրա, այլ դաւանել ռամկավարական գաղափարներ։

III

Մտաբերենք մի գիծ եւրօպական պատմութիւնից։

Երբ մի դար սրանից առաջ ֆրանսիական ազգը տառապում էր հին կարգերից և ձգտում էր նոր կեանք ստեղծելու, նրա լաւագոյն մտածողները կարծում էին թէ բաւական է, որ հին կարգը ոչնչացվի, բոլոր սահմանափակումները վերացվին և մարդը յայտարարվի ազատ, որպէսզի մարդութիւնը սկսի ապրել երջանիկ։ Եւ ֆրանսիական յեղափոխութիւնը ոչնչացրեց սահմանափակումները։

Սակայն իրական կեանքը չարդարացրեց բոլոր յոյսերը լիակատար չափով։ Ազատութիւնները տուին նշանաւոր և բեղմնաւոր հետևանքներ, բայց ամենեսեան կեանքում ազատութեան հովանու տակ սկսեց հաստատվել նոր սարկութիւնը։ Ազատ դրամատէրը ազատօրէն սկսեց ճնշել ազատ աշխատաւորին և պահել նրան իր ձեռքում, իբրև սարկի։

Եւ ահա պարզվեց, որ աշխատաւոր կամ չորրորդ դասակարգը մնացել է դուրս այն երջանկութիւնից, որ խոստանում էին ֆրանսիական յեղափոխութեան կարապետները։

Պէտք էր միջոցներ որոնել պաշտպանելու նաև այդ դասակարգի շահերը։

Ի՞նչպէս պաշտպանել։

Ահա այդ խոշոր հարցը տասնեակ տարիներ կանգնած է եւրօպական հասարակութեան առաջ և պահանջում է իր լուծումը։

IV

Ֆրանսիական յեղափոխութեան մտածողները մի խոշոր առաւելութիւն ունէին։ Նրանք դրել էին ընդհանուր սկզբունք։ Նրանք մշակել էին ծրագիր, որը պէտք է լիներ ոչ այս կամ այն անհատի, խմբի և դասակարգի, այլ իւրաքանչիւր անհատի և համայն ժողովրդի համար։

Սկզբունքը լայն էր և վեհ, բայց նա չը լուծեց բոլոր հարցերը։

Անբաւական մարդկութիւնը պահանջում է, որ այդ հարցերը լուծվին։

Եւ ահա մենք տեսնում ենք մեր առաջ մի շարք փորձեր։

Մի քաղաքական կուսակցութիւն ծրագրում է պետական ապահովութիւն աշխատաւորների համար, մի ուրիշը կազմակերպում է աշխատաւորների միութիւններ մաքառելու կապիտալի դէմ, երրորդը աշխատում է պարլամենտական ճանապարհով դերակշռող դարձնել աշխատաւորների ձայնը պետական գործերի մէջ և այլն։

Այդ բոլորը մօտեցնում է մեզ դժուար սօցիալական հարցի լուծմանը, բայց միևնոյն ժամանակ դա ամենևին չէ թեւադրում մեզ դասակարգային դարձնել սօցիալական ամբողջ կեանքը և վերածել ամեն բան զուտ պրօլետարական հարցի, բացասելով գիւղացու, արհեստաւորի, ինտելիգենտ աշխատաւորի, հասարակական պաշտօնեաների աշխատանքի իրաւունքը։

Դա կը լիներ նորից մի ճակատագրական սխալ գոնէ մեր երկրի, մեր ներկայի վերաբերութեամբ։

Եւ ահա ռամկավարական կուսակցութիւնները, որոնց թւում և հայ-ռամկավար կուսակցութիւնը, պատրաստ լինելով նուիրել իրանց գիւղացի և քաղաքացի աշխատաւորների դատի պաշտպանութեան, այնուամենայնիւ չեն կանգնած դասակարգային հողի վրա։ Նրանց նպատակը ընդհանուր աշխատաւորական է, ընդհանուր ժողովրդական ընդհանուր մարդկային։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Դանձակ, 12 մարտի

Ամսիս 10-ին, ցերեկ. ժամը 12-ին, փոխ.-նահանգապետ Կօվալեօվի կարգադրութեամբ, գաւառապետ Աւալեանի ժամ և նրա նախագահութեամբ տեղի է ունեցել մի ժողով քաջալերանքը ժամանակ ճանապարհների ապահովութեան հարցը քննելու համար։

Հայերի կողմից ժողովին հրաւիրված են եղել երդուեալ հաւատարմատարներ Յովսէփ Մելիք-Բէգլարեան, Աբ. Թէմուրեան և Ս. Լազարեան. Թուրքերի կողմից Խօյինսկի խանը, Ա. Խամամէդով և Ա. Բաֆլբէգով։

Ժողովում քննելով սար բարձրանալու հարցը, եկել են այն համոզման, որ պէտք է շատ քիչ օգտվել պահակ զինուորների աջակցութիւնից և առհասարակ աշխատել հնարաւոր միջոցներ ստեղծել, որ քօչը բարձրանայ առանց ուղեկցող զինուորների մասնակցութեան։

Ընդունել են, որ որոշ կէտերում, ճանապարհի ուղղութեան վրա զինուորական պահակներ ունենալը վատ չի լինի, բայց քօչերներին պէտք է ազատել կօղակներով ուղեկցելու միջոցից։

Մասնաժողովը ի նկատի ունենալով, որ քօչը բարձրանալու ժամանակ, նոյն իսկ խաղաղ տարիներում, հայ և թուրք անհանգիստ տարրերի մէջ կան այնպիսիները, որոնք կարող են որևէ միջնադէպի տեղիք տալ, այդպիսի պատահականութիւնների առաջն առնելու համար յարմար են տեսել գաւառի որոշ մասում հայերից և թուրքերից բաղկացած խառն մասնաժողովներ ունենալ, որոնց պարտքը կը լինի որևէ դէպք պատահած ժամանակ այդ գործը տեղն ու տեղը քննել, կամ տնավարի վերջ տալ խնդրին, և կամ իրանց վճիռը ներկայացնել իշխանութեան գործադրութեան։

Ահա այս եղանակով է վերջացել դաշտային մասում ապրող թուրքերի քօչը սար բարձրանալու հարցը։

Դենեռալ-նահանգապետը թուրքաց մասում նօվրուզ բայրամի զիշերը սատիկ հրացանաձգութեան համար, որի ժամանակ գնդակներից մի քանիսը կպել են հայոց թաղի տներին, 500 ր. տուգանքի է ենթարկել թուրքերին։

Իր ժամանակին յայտնել էի, որ գաւառիս սովեալների համար առանց հերթի Ռուսաստանի կայարաններից հացահատիկ բարձելու համար Ա. Տէր-Աւետիքեանը ճանապարհների հաղորդակցութեան մինիստրից ձեռք է բերել 60 վագօն հացահատիկ ընդունելու (առանց թերթի) հրաման։ Ներկայումս, գրում է յայտնի հացավաճառ Բարանովը, այդ տուած վկայականը, առանց հերթի ընդունելու համար, չէ յարգել Ստավրօպոլի տեղական երկաթուղու վարչութիւնը։

Սագան

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՇՈՒՐՋԸ

(Հեռագրով)

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 մարտի։ Մարտի 15-ին աշխատաւորական խմբակը Պետական Դումա է մտցնելու բոլոր բացառիկ որոշումները վերացնելու օրինագիծը։

Արդարադատութեան մինիստրը մինիստրների խորհրդի հաւանութեանն է ներկայացրել, ապա՝ Պետական Դումա մտցնելու համար մի օրինագիծ, որ վերաբերում է Պետական յանցաւոր դրդումներին վերաբերող գործերը կատարելու կարգին և դասային ներկայացուցիչների մասնակցութեամբ կազմված դատարանները վերացնելուն։

Անկուսակցական պատգամաւորների ժողովը, Լօպատինի նախագահութեամբ, որոշել է կազմել անկուսակցականների Ֆրակցիա, որպէսզի կարելի լինի ընդհանուր ձայնաւորութեան ժամանակ անցկացնել և անկուսակցական Ֆրակցիայի կարծիքները։

1906 թ. յունիսի 28-ին Պետական Խորհրդի առաջին նստաշրջանի ժամանակ ընտրած մասնաժողովը, որ զբաղվում է առաջին Դումայի մշակած մահվան պատիժը վերացնելու օրինագիծի քննութեամբ, ձայների մեծամասնութեամբ—ընդդէմ Ցագանցևի և Պլատօնովի—որոշել է չը քննել այդ օրինագիծը ըստ էութեան, փակել մասնաժողովը, պատճառաբանելով իր որոշումը նրանով, որ մահվան պատիժը վերացնելու օրինագիծը, որ մշակել է առաջին Դուման, չէ քննվել երկրորդ Դումայում և նրա ընդունելը Խորհրդից կարող է, հակառակ 86-րդ յօդուածի, ստեղծել վիճելի թիւն, որ Բարձրագոյն հաստատութեան կը ներկայացվի մի այնպիսի օրինագիծ, որին համաձայն չի լինի Դուման։ Հարցի վերջնական լուծումը կը կայանայ Խորհրդի հետևեալ նիստում, որ նշանակված է մարտի 14-ին։

ՄԱՄՈՒԼԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

(Նամակ Պետերբուրգից)

Երեկ, մարտի 4-ին, կայացաւ Տաւրիկեան պալատում մամուլի ներկայացուցիչների երկրորդ ընդհանուր ժողով նախագահութեամբ Անենսկու և քարտուղարութեամբ Արաքաժինի։

Ինչպէս յայտնի է, Դումայի նիստերին ներկայ լինելու համար իրաւունք են ստացել առ այժմ 110 օրգան և դեռ շարունակում են գալ զանազան տեղերից խնդիրքներ։ Անցեալ ընդհանուր ժողովում պարզ էր, որ բիւրօն իր տրամադրութեան տակ ունի միմիայն 88 մշտական տեղ, բայց որովհետև պահանջը մեծ է, այդ պատճառով բիւրօն վճռել է տալ ներքևի լօժայում 42 մշտական և 15 պատահական տոմակներ, իսկ վերին լօժայում 42 մշտական և 20 պատահական, որպէսզի այդպիսով բաւարարութիւն տայ ըստ կարելւոյն բոլորի պահանջին։ Բայց այս կարգադրութեան դէմ առաջին արշաւանք է սկսել օրանսկի բաժանմունքի զլխաւոր բիւրօն՝ յանձին Օստեն-Սակենի. սա պահանջում է, որ բիւրօն ներկայացնի բոլոր ժուրնալիստների մասին մանրամասն տեղեկութիւններ, «պատշաճաւոր տեղեկութիւններ» հաւաքել ժուրնալիստների մասին և ապա յայտնել, թէ որ ժուրնալիստ իրաւունք ունի տոմսակ ստանալու և որը ոչ։ Բիւրօն օրանսկիի այդ պահանջը մերժել էր, և այս ընդհանուր ժողովում պիտի քննվէր այդ հարցը՝ թէ արդեօք տալ այդ տեղեկութիւնները, թէ ոչ։

Երկրորդ նոյնպէս լուրջ և կարևոր հարցը այն էր, որ ընդհանուր ժողովը պիտի որոշում կայացնէր Նախագահ Գօլօվինի և առհասարակ ամբողջ պրէզիդիումի բռնած դիրքի վերաբերմամբ։ Ահա թէ բանը ինչումն է։

Ինչպէս անցեալ անգամ գրել էի, փետրվարի 14-ի ժողովում վճռվեց այս տարի էլ կատարել նոյնը, ինչ որ անցեալ տարի էին արել բիւրօյի անդամները, այն է, որովհետև դումայի պետական քարտուղարը սահմանափակել էր ժուրնալիստներին տրվելիք տոմսակների թիւը, բոլոր այն ժուրնալիստներին, որոնք մշտական տոմսակ չէին ստացել, տալ նրանց ժամանակաւոր տոմակներ առաջին երկու կամ երեք նիստի համար, կարծելով որ Գօլօվինը նոյնը կանի, ինչ արել է Մուրոմցևվը, բայց պարզվեց, որ մենք սխալվել ենք։ Գօլօվինը ընտրվեց, բիւրօն անմիջապէս ներկայացաւ նրան և առաջարկեց մի քանի շատ կարևոր հարցեր. 1) ժամանակաւոր տոմսակներին տարբերվելը, որպէսզի նրանք արդէն դառան մշտական, 2) թոյլ տալ վերին լօժայից անցքը բանալ դէպի կուլուարները, 3) յատկացնել բիւրօյի համար մի սենեակ ներքևում, 4) կարգադրել որ բոլոր ստենոգրաֆիական արձանագրութիւնները և առհասարակ Դումայի վերաբերեալ բոլոր նիւթերը դրվին բիւրօյի տրամադրութեան տակ, որպէսզի ժուրնալիստները օգտվին ճիշտ տեղեկութիւններով, և այլն էլի մի շարք ուրիշ հարցեր։ Անցեալ տարի Մուրոմցևվը առանց մի խօսք ասելու բաւարարութիւն է տուել այդ պահանջին և այդպիսով վերջ է տուել մի շարք հարցերի, բայց Գօլօվինը պատասխանել է, թէ «ես ընդունում եմ այն սկզբունքը, որ բոլոր հարցերը պիտի վճռվին կօլեգիալ և մինչև պրէզիդիումի ընտրվելը սպասեցէք»։ Երկար սպասվեց, մինչև պրէզիդիումը կազմվեց, բիւրօն նորից առաջադրեց անհրաժեշտ և անյետաձգելի հարցերը, բայց պրէզիդիումը ոչինչ չարաւ, [illegible] խոստացաւ բանակցել ադմինիստրացիայի հետ, որ վերին լօժայից անցքը բացվի դէպի կուլուարները,—ի դէպ ասեմ, որ այդ հարցն էլ մերժվել էր, որովհետև օրանսկիը ասել էր, որ առայժմ այդ հարցը չէ կարող դրականապէս վճռվել, մինչև որ չը պարզէ ժուրնալիստների անձնաւորութիւնները և նրանց «բլագոնադեժնոստը»։ Այսքանս բաւական էր, որ բարօն Օստեն-Սակենը թև առնէ և կարգականապէս պահանջէ բիւրօյից ժուրնալիստների մասին տեղեկութիւններ։ Նա մինչև անգամ այն աստիճան համարձակ էր դառել, որ թոյլ չէ տալիս պատգամաւորներին խօսել ժուրնալիստների հետ, պահանջել է, որ մինչև այժմս տրված տոմսակները բոլորը վերադարձվեն և ինքը պիտի տայ նորերը, բոլորովին այլ գոյնի։ Ինչպէս ասում են, նա խստակցութեան մէջ մի ժուրնալիստի զգուշացրել է. «խիստ ֆիլտրացիայի կենթարկեմ, անցեալ տարվայ ազատութիւնները անցան»...

Երրորդ նոյնպէս կարևոր հարցը այն էր՝ քննել ներկայ բիւրօյի բոլոր գործերը, ընդունել նրանց հրաժարականը և ընտրել նոր բիւրօ։

Ինչպէս պարզվեց, բիւրօն օգտվելով փետրվարի 14-ի ժողովի որոշումով, ամեն մի խմբագրութեան վրա տուրք է դրել 50 ռուբլուց մինչև 2 ռուբլի և այդպիսով դումարվել է 1025 ռուբլի 50 կօպէկ։ Բիւրօյի գանձապահի հաշուից երևաց, որ արվել են մի շարք վիճելի ծախսեր, օրինակ 100 ռուբլի տուել են Մուրոմցևվի պատկերին, 200—300 ռուբլի տուել են գրող մեքենային, և այլն այսպիսի աւելորդ ծախսեր, մինչդեռ բիւրօն բոլորովին կարիք չունի այդ առարկաներին։ Անցեալ անգամ նոյնպէս ընդհանուր ժողովը իրաւունք էր տուել բիւրօյին տուրք դնել ամեն մի օրգանի վրա, բայց այն ժամանակ ամենամեծ տուրքը 10 ռուբլի է եղել, մինչդեռ այս տարի շատ անհնարին և փոքր թերթեր պիտի վճարեն 15 ռ.։ Բանից դուրս է գալիս, որ Տաւրիկեան պալատի ադմինիստրացիան մամուլի ներկայացուցիչների համար յատկացրել է դատարկ սենեակ և լօժաներ, իսկ սեղանները և աթոռները բիւրօն իր հաշուին է առել։ Անպայման բիւրօյի սխալն է, որ փոխանակ պահանջելու պալատի ադմինիստրացիայից բոլոր հարկաւոր կահ-կարասիքը, ինքը ծանր տուրք է նշանակել թերթերի վրա և գնել է այդ բոլորը։ Այնպէս որ հարց է բարձրանում, թէ ինչ պիտի անել այդ ինվենտարի հետ Դումայի փակվելուց յետոյ...

Այս երեք գլխաւոր հարցերով պիտի զբաղվէր ներկայ ընդհանուր ժողովը, բայց դժբախտաբար այդ օրը մարդիկ զբաղված էին բոլորովին ուրիշ բանով։ Շատ ծանր էր տեսնել, թէ ինչպէս մամուլի ներկայացուցիչները միմեանց պախարակում, մրոտում էին, որպէսզի իրանք կարողանան բիւրօյի անդամ դառնալ, և այդպէս ամբողջ 5 ժամ բոլորովին ապարդիւն անցաւ և ժողովը չը զբաղվեց վերոյիշեալ հարցերով, այլ հաղիւ հազ կարողացաւ ընտրել նոր բիւրօ։

Ընտրութիւնների ժամանակ պայքար էր մղվում գլխաւորապէս երկու խմբի մէջ, այն է՝ մէկը ցանկանում էր, որ բիւրօյում լինեն մեծ մասամբ մայրաքաղաքի մամուլի ներկայացուցիչները, որպէսզի լօժաներում տեղերը դասաւորեն իւրայինների համար աւելի յարմար և լաւ, իսկ միւս խումբը ասում էր, որ հարկաւոր է ընտրել գործունեայ, անաչառ և ազնիւ անձնաւորութիւններ, այլապէս ոչ մի ժամանակ բիւրօյում հանգստութիւն չի լինի և կը տիրեն այն քաոսը և ինտրիգները, որով վարակված են ներկայ բիւրօյի կազմը։

Այս անգամ նորից խօսակցութեան առարկայ դարձաւ, թէ արդեօք քան[illegible] անգամ ընտրել. բիւրօյի մէջ կային առ[illegible]ներ, որ ներկայ բիւրօյում ինտրիգներ առաջ եկան այն պատճառով, որ գործ քիչ էր, իսկ մարդիկ շատ և այդ պատճառով առաջ էին գալիս անհամաձայնութիւններ. այդ պատճառով առաջարկվում էր 5 հոգով բաւականանալ (առաջ. Մարգուլիսի), իսկ մեծամասնութիւնը ընդունեց Մեակօտինի առաջարկութիւնը, որ լինեն 9 հոգի, միայն ոչ թէ ընտրվեն կուրիաներով, ինչպէս անցեալ ժողովում, այլ ընդհանուր ժողովը ընտրէ բոլոր 9 հոգուն։ Հարկաւոր է, ասաց Մեակօտինը, որ այդ 9 հոգու մէջ լինեն մի քանի աչքի ընկնող անձնաւորութիւններ, որոնք թէև պարզ է, որ բիւրօյի մշտական աշխատանքին ամբողջովին մասնակցել չեն կարող, բայց նրանց ներկայութիւնը բիւրօյում առհաւատչեայ կը լինի նրանց պրէստիժի բարձրանալուն, առաւել[illegible] կայ մի այնպիսի կարծիք, որ մեր բիւրօ[illegible] պիտի կապեր հաստատէ արտասահմանեան պարլամենտների մամուլի բիւրօների հետ»։

Ընտրութիւնները տուին հետևեալ արդիւնքը. անցան գլխաւորապէս սօցիալիստական օրգանների բլօկի ներկայացուցիչները, այն է՝ Աշէշով 76 ձայն, Անենսկիյ 69, Մեակօտին 65, Սուեատլօվսկիյ 65, Բօլկովաձէ 51, Ալէքսեյեվ 44, Արաքաժին 40, Ֆրունկինա 39 և

Բրուսիլովսկիյ 39, իսկ անձնափոխանորդներ՝ Գէլաա 36 և Բասներ 35 ձայնով։

Հակառակ կողմը միայն անբաւական և խիստ մտքից ընդհանուր ժողովի քննութեան այն հարցը, թէ քանի օրվանի ներկայացուցիչներ պիտի առաջարկեն, որպէս զի բիւրօն հրաւիրէ ընդհանուր ժողով և օրակարգի մէջ դնէ նոր բիւրօյի ընտրութեան հարցը,—վճռվեց. որ 20 օրվանի ներկայացուցիչների պահանջով։

Դրանից յետոյ հարց բարձրացաւ, ներկայ ժողովը վերջացած համարել, թէ ընդհատված,—ընդունվեց, որովհետև վերև յիշված հարցերը պահանջում են անյապաղ լուծումն և միւս կողմից օխրանիկ բաժանմունքը քանի գնում աւելի և աւելի յանդուգն է դառնում, զումարել շտապով ընդհանուր ժողով, որը կը լինի ներկայի շարունակութիւնը և վճռել այդ հարցերը։

Ինչպէս այսօր իմացայ, արդէն կազմվել է մի խումբ, 20 հոգուց բաղկացած, որը առաջարկելու է բիւրօյին, որ նա ընդհանուր ժողովում օրակարգի մէջ մտցնէ նոր բիւրօյի ընտրութիւն։ Դա արդէն չափից դուրս է, որ մարդիկ չեն էլ ուզում մի քանի օր սպասել, որ տեսնեն, գուցէ այս նոր ընտրված բիւրօն իր կոչման բարձրութեան վրա է կանգնած. բայց ոչ, այդ մարդկանց գործը չէ հետաքրքրում, այլ անձնաւորութիւնները։

—

Տաւրիկեան պալատը, ինչպէս երևում է, դեռ չէ կարող շուտով պատրաստ լինել Նիստերի համար, ուստի պրէզիդիումը վճռել է նիստերը ունենալ ամ այժմս ազնուականների ժողովարանում։ Վաղը կը լինի այնտեղ առաջին նիստը, ուր կը կարդայ իր դեկլարացիան Սոսլիպինը։

Քննութիւնը պարզել է, որ Տաւրիկեան պալատի համարեա բոլոր գահիճները վռանաւոր են, իսկ նիստի դահլիճի առաստաղի գեղանները փոած են, այնպէս որ վճռել են փոխել նրանց երկաթի ռիսերով։ Ամեն օր բանում են զիշեր-ցերեկ երկու հերթով 250 զինւոր սապէօրներ և ահագին քանակութեամբ բանւորներ, այնպէս որ խնժեներից մէկը ինձ հաւատացնում էր. որ մինչև այս հինգշաբթի օրը բոլորը պատրաստ կը լինի և նիստեր կարող են այնտեղ՝ Տաւրիկեան պալատում տեղի ունենալ։ Այժմս դեռ մնացած ծեփը չեն հանել, դեռ պիտի նրան հեռացնեն, գեղանները փոխեն և ապա առաստաղը լինօլէումով կպցնեն, ինչպէս որ երկաթուղու վագոնների պատերը ծածկած են։

Արսէն Քալանթար

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 մարտի։ Նիստը բացվում է ժամը 11 և 7 րոպէին։ Մինիստրական օթեակներումն են Սոսլիպինը, Ռէդիգերը, Տրուսեվիչը։ Նախագահում է Գոլովինը։ Նիստը բանալով նա յայտնում է կրկին Պետական Դումա մտցրած մինիստրական օրինագծերի մասին, որոնց թւումն են և ընդհանուր ուսում մտցնելու, խղճի ազատութեան, անձի անձեռնմխելիութեան, զաղանի նամակագրութեան վերաբերվողները, ապա առաջարկում է Դումային վճռել—ո՞ր օրերը ընդհանուր ժողովներ գումարել և ո՞ր օրինագծերը յանձնել բաժիններին և ժանտժողովներին։ Դուման միաձայն ընդունում է՝ ընդհանուր ժողովները գումարել երկուշաբթի, երեքշաբթի, հինգշաբթի և ուրբաթ օրերը։

Միխայիլ Սախովիչը առաջարկում է այսօր չը քննել այն հարցը, թէ ո՞ր ժամերին պէտք է ժողովները գումարել, և առաջարկում է նիստը բանալ ցերեկվայ ժամը 2-ից։

Նիդրովսկին (Մոգիլէվկի նահանգ) համամիտ չէ այդ կարծիքին և առաջարկում է աշխատել առաւօտեան ժամը 11-ից։

Կապուստինը (Կազան), Կուպչինսկին (Բեսարաբիա) միանում են Սոսլիպովիչի առաջարկութեան։

Մանդեդալանների ներկայացուցիչը խնդրում է ուրբաթ օրերը նիստերը սկսել ցերեկվայ ժամը 2-ից, որովհետև այդ օրերում առաւօտները մանդեդալանները անհրաժեշտօրէն մեկնում են գնալու։

Քուէարկութեամբ ընդունվում է՝ նիստերը սկսել առաւօտեան ժամը 11-ից, ուրբաթ օրերը—ցերեկվայ ժամը 2-ից, մէկ ժամ ընդմիջումով, վերջացնել երեկոյան ժամը 6-ին և շարունակել վերին ատեանի անհրաժեշտութեան և հարկ եղած դէպքում. եթէ նիստի օրը ուշ լինի, այն ժամանակ նա դումարվելու է առաջիկայ չորեքշաբթի և շաբաթ օրերը։

Ալեքսանդր Սախովիչը, սահմ.-ռամկ. (Օրլովի նահ.) առաջարկում է որոշել՝ առաջին իսկ հերթին անյապաղ դնել պատերազմա-դաշտային դատարանները վերացնելու յայտարարութեան քննութիւնը։ Այս առաջարկը եռանդուն պաշտպանում են Շինգարեվի՝ սահմ.-ռամկ. և Ակիմովսկին՝ սոց.-դեմ. ձախակողմեանները և կենտրոնի մի մասը ծափահարում են։ Առարկում են միապետականներ Բարիսնիկի (Տուլայի նահ.), Պատրիկեիվիչ, Սինեաշնիօ և ուրիշները, յայտնելով, որ չէ կարելի ընդնել հինգ իսկոյն պատերազմաւորներին բաժանած զեկուցագիրը և առհասարակ հարկաւոր է պահպանել ծանուցագրերի կարգը։ Քուէարկութեան ժամանակ, անժխնդալէս քննելու դէմ խօսում է ամբողջ աջակողմը։ Բոլոր ձախակողմեանների և կենտրոնի մեծամասնութեամբ վճռվում է հարցը քննել անմիջապէս։

Պատերազմա-դաշտային դատարանները վերացնելու առիթով 44 անդամների ներկայացրած յայտարարութեան զեկուցանող Վլադիմիր Հեսսենը մասնաւորապէս նշում է, որ Սոսլիպինը իր դեկլարացիայում՝ բոլորովին չէ յիշատակել պատերազմա-դաշտային դատարանի մասին։ Երևում է, կառավարութիւնը չէ կարծում, որ Դումայի բացման օրից հետ. Դումա մտցնէ 87-րդ յօդուածի համաձայն մտցրած պատերազմա-դաշտային դատարանները վերաբերեալ օրինագիծ և այդ դատարանները թողնում է մնալու ապրիլի 20-ին բնական մահով։ Ժողովրդական ներկայացուցչութեան հիմնադիրը անհամապատասխան գտնելով պատերազմա-դաշտային դատարանների հետ, Դուման կարող է արագացնել նրանց վերացումը։ Երևում է, որ մինիստրութիւնն էլ չէ ցանկանում օգտվել օրինական երեսունօրեայ ժամանակամիջոցով՝ օրինագծերի հետ ծանօթանալու համար։ Այդ բանում մինանդամայն համոզված լինելով, հանսօրը գտնում է, որ ի նկատ առնելով հարցի պարզութիւնը, նա վիճաբանութիւններ առաջ չի բերի ոչ Դումայում, ոչ Պետական Խորհրդում։ Առաջարկութիւն անելով սահմ.-ռամկավարների կուսակցութիւնը, կոչ է անում՝ խաղաղացնել երկիրը։ Ցանուն երկրի խաղաղացման անհրաժեշտ է կանգնեցնել զահիճների ձեռքը, ցամաքացնել արիւնը և արցունքները։ Դուման պէտք է բողոքէ կառավարական տերրօրի դէմ, որ միւս կողմից ինքն է տերրօր ծնում։

Մենք չենք կարող պատմութիւնից պոկել այն էջը, որի վրա գրված է պատերազմա-դաշտային արդարադատութեան անունը։ Թերթենք գոնէ այդ դէպքերի էջը։

(Գուրիչկեվիչ և այլ աջակողմեաններ. «Բարեհաճեցէք խօսել ըստ էութեան»)։

Հանսօրը առաջարկում է անմիջապէս յանձնարարել ընտրվող մանաժողովին մէկ օրվայ ընթացքում քննել հարցը և խնդրել նախագահին—հարցը մտցնել մօտակայ նիստին։

Մինիստրական բոլոր տեղերը գրաւված են։ Ներկայ են Սոսլիպինը, Կոկովցեվը, Ռէդիգերը և մեծատեղերը։

Սկսվում են վիճաբանութիւններ օրինագծի էութեան վերաբերութեամբ։

Կոնստանտինով (խաղաղ վերանորոգչական) չէ ընդունում մասնաժողովի դրութիւնը և առաջարկում է անմիջապէս հարցապնդումը քննել Դումայում։ Օրինակ է բերում, թէ ինչպէս մի ոմն, որ մահվան պատժի էր դատապարտվել, մեռնելով ազատվում էր՝ «կեցցէ ազատութիւնը». շատ և շատ լուսոյն գործիչներ մեռնում են այդպիսի մահով (լուսոն և ազմկալից ծափահարութիւններ ձախակողմում)։ Միակ դատարանը, որ կարող է պատասխանել իսկական պահանջին, երդուեալների դատարանն է։

Շիրսկին (սոց.-յեղ.) պատերազմա-դաշտային դատարանները համարում է ազմինիստրատիւ պատիժ։ Ինքը մինիստրութիւնը, որ իրան սահմանադրական հռչակեց, հարվ. թէ հակառակ է վերացման. յայտնում է, որ մօտ օրերս սոցիալ-յեղափոխականները, ժողովրդական սոցիալիստները և աշխատաւորականները մի օրինագիծ կը մտցնեն՝ բոլոր բացառիկ որոշումները վերացնելու մասին։

Կուզմին-Կարավայեվը մատնանշում է, որ մենք գանվում ենք հաղարաւոր մահվան պատիժների ապաւորութեան տակ։ Պատերազմա-դաշտային դատարանները, ի հարկէ, դատարաններ չեն և կուլտուրական պետութեան մէջ գոյութիւն պահանջել չեն կարող։ Օգեսայում մահվան պատիժ տալուց յետոյ, պարզված է, որ չորս պատժվածները անմեղ մարդիկ են եղել. նոյն տեսակ սխալներ եղել են և Իրկուտսկում, և Կրասնօխարսկում։ Դաշտային արդարադատութեան ժամանակ իր վախճանին է գիմում։ Անհրաժեշտ է զինւորական արդարադատութեան (?) հետ միասին դատաստանական կարգով վերաքննել աքսորով փոխարինվող մահվան պատիժներին վերաբերող դատավճիռները։ Միանում եմ սահմ.-ռամկավարների ծրագրին։ Հանսօրը ուրախութիւն է յայտնում, որ այդ ռուսահպատակները կրում են ոչ ռուս ազգանուններ (ձախակողմը ծափահարում է)։

Նուլգին, աջակողմեան.—Համաձայն եմ, որ պատերազմա-դաշտային դատարանները անՆորմալ են, սակայն նրանց անհրաժեշտութիւնը ստիպում է նրանց մտցնել, երբ ընդհանուր արդարադատութիւնը անզօր է։ Սովորական դատարանները այսպիսի ժամանակ կուլ չեն կարող բնաւ։ Իրանք դատարանները գանվում են տերրօրի սարսափի տակ։ Բայց և այնպէս, եթէ սահմանադիր-ռամկավարները դատարանները երկրի սահմանադրական ոգուն անհամապատասխան են գտնում, ուրեմն ինչու բարձրապաւ կուսակցութիւնը անարգանքի սիւներն չէ բնհում յեղափոխական դատարանների դաղանի և մութ իրաւաբաններին, ինչու հարց չէ տալիս՝ կին արդեօք այնտեղ պաշտպաններ և վկաներ։ Սահմանադիր-ռամկավարները պէտք է ազազակեն՝ «կանգնեցրէք յեղափոխական տանջասխօսներին», իսկ նրանք ծափահարում են այդ սպանութիւնները։ (Ձախակողմեանները ծափահարում են, կենտրոնը՝ «սուտ է»։ Նախագահը ընդհատում է պատգամաւորին)։ Հանսօրը շարունակում է. «Ընդունում եմ նախագահի նկատողութիւնը. յիշեցնում եմ մի փաստ, որ սահմ.-ռամկավարները ժողովներից մէկում ծափահարեցին, երբ խմցան Դուբասովի կեանքի դէմ կատարած մահափորձը (Աջակողմեանները ծափահարում են, կենտրոնը և ձախակողմը բուռթիւն են պատճառում)։ Հանսօրը պարզաւանց է յայտնում բանական (интелектуальный) սպանութիւններին։ (ձախակողմից ձայներ՝ «Կրուչէվան»)։

Նուլգին.—Ո՛չ, սա Սեմէնով կօրէլինկոյի մարդասպանն է։ (Աջակողմը՝ «ըրաւօ, ըրաւօ», կենտրոնը և ձախակողմը՝ «սուտ է, սուտ է»։ Ճառը վերջացնում է ձախակողմեանների սուլոյներով և աջակողմեանների ծափահարութիւնների տարափի տակ)։

Կրուչեվան.—Այստեղ կարծիք յայտնվեց, որ չի լինի այնպիսի պատգամաւոր, որ կողմնակից լինի պատերազմա-դաշտային դատարաններին։ Սակայն ոչ ոք չառաջարկեց դնել յորդորանքով խնդրագրներին և այդ դատարանների պատճառ եղողներին։ Նախ քան քակելու այն շղթան, որ արդէն է դատնում խեղդագրներին արիւն թափելու, Դուման պէտք է պարտաւանք յայտնէ այն դաղանութիւններին, որոնք մարդկային լեզուի մէջ ոչ մի անուն չունեն։ Մեր երկրի յուզմունքները անցնում են ուրիշ երկիրներ։ Սահմանադիր-ռամկավարները աշխատանք չը գործ դրին բնաջնջելու երկրի յեղափոխութեան դրութիւնը։

Ստուչեվան.—Դիտեմ, որ դուք վախենում էք այդ նիւթի մասին խօսել, բայց ես իմ կարծիքը կարտայտեմ՝ իբրև ազատ քաղաքացի։ Դուք գուցէ միանաք իմ սասանեցին (Ծիծաղում են կենտրոնը և ձախակողմը)։ Պաշտպանում եմ (?) զինւորա-դաշտային դատարանները վերացնելու առաջարկը։ Դիւղացիները իրանք կը հասկանան իրանց անկիլքը։ Ազմուկ և բղաւոցներ ձախակողմում, մի քանի ձախակողմեաններ ծափահարում են)։

Պուրիշկեվիչ.—Կը թեմ յեղափոխականների ձեռքով սպանված վարչական բարձր անձանց ցուցակը. Մեծ իշխան Սերգէյ Ալէքսանդրովիչ, Սիպեագին, Պլեվէ, Սախարով, Պաւլով, Ալիպով, Մին։ Ցիշել բոլորի անունները։ Աւելի լաւ է կը հարցնեմ, ուր է Սազօնովը, Սպիրիդոնովան։ Նրանք դեռ ապրում են։ (Ազմուկ է ընկնում ձախակողմում և կենտրոնում. կենտրոնից մէկը հարցնում է՝ «ուր է Հերցենշտեյնի սպանողը»)։ Ճառախօսը թւում է արիւնռաց Եւրօպայի այն գիտնականների անունները, որոնք պաշտպան են հանդիսանում մահվան պատժին և առաջ է բերում Անգլիայի մի ամբողջ շարք բիւրերը, որոնք առաջարկվում էին մահվան պատիժը ատիճանաբար վերացնելու համար. 1810 թւին 35 պինսների գողութեան համար, 1835 թւին ձիագողութեան և նամակներ բաց անելու համար, XX-րդ դարի արշալոյսին արևմուտքում դոյութիւն ունեն 20 տեսակի յանցանքներ, որոնց համար մահվան պատիժ է սահմանված։ (Ձայներ. «խօսեցէք դաշտային-դատարանների մասին»)։ Ճառախօսը պատասխանում է.—Զինւորա-դաշտային դատարանները յայտնի է թէ ուր են տանում (կենտրոնում և ձախակողմում քրքջում են)։ Ցարանսկական հանրապետութեան մէջ մահվան պատիժը գործադրվում էր կրնօյի նախագահութեան ժամանակ։ Մեզ աջակողմեաններս այստեղ անուանում են Հերցենշտեյնի սպանողներ։ Դա ծիծաղելի է. մարդասպանները նստած են ձախակողմում։ (Ազմուկ են բարձրացնում ձախակողմում)։ Ճառախօսը կարդում է սոց.-յեղափոխականների Տամբովցեւում ընդունած բանաձևը, որով անհրաժեշտ է համարվում գործադրել տերրօրը իշխանութիւնը վերջնականապէս ուժասպառ անելու նպատակով։ Նախագահը խնդրում է չանել այդպիսի քաղուածքներ, որոնց զուցէ համաձայն չեն յիշեալ կուսակցութեան պատգամաւորները։ Ճառախօսը կարդում է «Нов. Вр.»-ի մէջ լոյս տեսած սոց.-յեղափոխականների այն յայտարարութիւնը, թէ Օխոտնիկի մասի պրիստաւ Բաղդէլիովկին սպանված է անյայտացած ընկերոջ ձեռքով։

Դուման պէտք է ցոյց տայ երկրին, ժողովրդին և գահին, որ մենք ճշմարտութեան մարդիկ ենք։ Դաշտային դատարանները վերացնելով Դուման լիզափոխականներին փոպաքշած, խրախուսած կը լինի (աջակողմը ծափահարում է, ձախակողմը՝ սուլում)։

Մակլակով (Մոսկվա, կադետ) ուշադրութիւն է դարձնում ուժեղացրած պահպանութեան վերաբերեալ կանոնների 17-րդ յօդուածի վրա, որը իրաւունք է տալիս զինեալ նահանգապետներին դաշտային դատարանների քննութեան յանձնարարել գործերը, երբ իրանք անհրաժեշտ են համարում. այդպիսով տեղծվել է ազմինիստրացիայի քնահաճոյքի իրաւունքը։ Ահա որտեղ է չարիքը։ Դա խոտաստանէ բեռդիսպա չէ, այլ ընդհանուր նորմաներ ենթադրում։ Զինւորական օրէնքքերի մէջ կայ մի յօդուած, 197-րդը, որ մահվան պատիժը ընդունում է զինւորական կանոնների հիման վրա միայն, այլ ոչ առանձին անհատի քնահաճոյքի, կամքի համաձայն։ Զինւորական-դաշտային դատարանը իրաւունք չէ տալիս գործը քննութեան ենթարկել փաստորէն։ 1906 թւի օգոստոսի 19-ի օրէնքը հէնց առաջին տողերից կանխորոշում է դատավճիռները։ Կանգնելով նոյնիսկ աջակողմեան կուսակցութիւնների տեսակէտի վրա, անհրաժեշտ է ընդունել, որ դաշտային դատարաններ հակասահմանութիւն է ստեղծում։ Մասնաւոր շտեները չեն խնայում ոչ կառավարութիւնը, ոչ էլ մաքսիմալիստները, բայց աջակողմեան կուսակցութիւնները հարուածելով յեղափոխութեանը՝ հարուածում են միևնոյն ժամանակ իրաւունքներն ու օրէնքները։ Ես սպասում եմ յեղափոխութեան վախճանին, այլ ոչ յեղափոխութիւնը դէմ ուղղված հարուածներին։ Կը սասանեք (?) խաղաղութիւն, պարոն աջակողմեաններ, եթէ դուք կը հարուածէք յեղափոխութիւնը, կը հարուածէք պետութիւնը, այն ժամանակ ձեզնում կը միայ միայն լիակատար քաոս (աղմկալի և երկարատև ծափահարութիւններ ձախակողմում և կենտրոնում)։ Մակլակովը շարունակում է.—Կառավարչական իշխանութիւնը չը պէտք է նմանվի յեղափոխական տերրօրիստներին (ծափահարութիւններ)։ Զախակողմի տերրօրը, անկեղծաբար կասեմ, դաշտային դատարանների հետ համեմատելով աւելի պակաս սարսափելի է։ Տերրօրից կարելի է փախչել, ազատվել, մինչդեռ դաշտային դատարաններից փրկութիւն չը կայ։ Մարդուն կանգնեցնում են չորս սպանների առջև և կախաղան հանում պրոկուրորի և քահանայի ներկայութեամբ։ Մարդկային ընոյթի մոռացութեան բեկորը դերազանցեց իշխանութեան մէջ։ Դաշտային դատարանները ներմուծեցին այնպիսի կարգեր, որոնք չեն համապատասխանում մինիստրական պեռոներից այստեղ արտասանված խօսքերի հետ։ Ցոյս ունեմ, որ մինիստրութիւնը ինքը կասէ.—դաշտային սպանութիւնները չեն կատարվում (աղմկալի, երկարատև ծափահարութիւններ)։

Նախագահը յայտարարում է ընդմիջում։ Նիստը վերսկսվում է ժամը 3 և 17 րոպէին։ Այնուհետև առաջարկը պաշտպանում են կադետ Նօվոդվօրսկին (Վարշավա) ամբողջ լեհական ժողովրդական խմբակի անունից, Բօբրինսկին (Եարօսլավլի նահանգի), Բուլգակով (Օրլովի նահ.), Կապուսին (Կազան) հոկտեմբերի 17-ի դաշնակցութեան անունից։ Ճառախօսը մատնանշում է, որ արդարութիւնն ու գթութիւնը թող յարատև լինի դատարաններում—որ Ազատարար Թագաւորի թողած կտակն է։ Դաշտային դատարանների մէջ չը կայ ոչ արդարութիւն, ոչ էլ գթութիւն։ «Ակն ընդ ական, ատամն ընդ ատամն»-ը չը պէտք է կուլ զնք ծառայէ զօրեղ պետութեան համար։ Այնուհետև մի սգեղոքով ճառ է արտասանում կադետ Տեսլենկօն (Մոսկվա), մատնանշելով, որ նոյնիսկ պատերազմում լրտեսների վերաբերմամբ չէ գործադրվում այն, ինչ գործադրում են մեզանում ներքին թշնամիների դէմ։ Ճառախօսը կարդում է սոց.-յեղափոխականների Տամբովցում ընդունած բանաձևը, որով անհրաժեշտ է համարվում գործադրել տերրօրը իշխանութիւնը վերջնականապէս ուժասպառ անելու նպատակով։ Նախագահը խնդրում է չանել այդպիսի քաղուածքներ, որոնց զուցէ համաձայն չեն յիշեալ կուսակցութեան պատգամաւորները։ Ճառախօսը կարդում է «Нов. Вр.»-ի մէջ լոյս տեսած սոց.-յեղափոխականների այն յայտարարութիւնը, թէ Օխոտնիկի մասի պրիստաւ Բաղդէլիովկին սպանված է անյայտացած ընկերոջ ձեռքով։

Դուման պէտք է ցոյց տայ երկրին, ժողովրդին և գահին, որ մենք ճշմարտութեան մարդիկ ենք։ Դաշտային դատարանները վերացնելով Դուման լիզափոխականներին փոպաքշած, խրախուսած կը լինի (աջակողմը ծափահարում է, ձախակողմը՝ սուլում)։

Մակլակով (Մոսկվա, կադետ) ուշադրութիւն է դարձնում ուժեղացրած պահպանութեան վերաբերեալ կանոնների 17-րդ յօդուածի վրա, որը իրաւունք է տալիս զինեալ նահանգապետներին դաշտային դատարանների քննութեան յանձնարարել գործերը, երբ իրանք անհրաժեշտ են համարում. այդպիսով տեղծվել է ազմինիստրացիայի քնահաճոյքի իրաւունքը։ Ահա որտեղ է չարիքը։ Դա խոտաստանէ բեռդիսպա չէ, այլ ընդհանուր նորմաներ ենթադրում։ Զինւորական կանոնների 197-րդ յօդուածը, որ մահվան պատիժը ընդունում է զինւորական կանոնների հիման վրա միայն, այլ ոչ առանձին անհատի քնահաճոյքի, կամքի համաձայն։ Զինւորական-դաշտային դատարանը իրաւունք չէ տալիս գործը քննութեան ենթարկել փաստորէն։ 1906 թւի օգոստոսի 19-ի օրէնքը հէնց առաջին տողերից կանխորոշում է դատավճիռները։ Կանգնելով նոյնիսկ աջակողմեան կուսակցութիւնների տեսակէտի վրա, անհրաժեշտ է ընդունել, որ դաշտային դատարաններ հակասահմանութիւն է ստեղծում։ Մասնաւոր շտեները չեն խնայում ոչ կառավարութիւնը, ոչ էլ մաքսիմալիստները, բայց աջակողմեան կուսակցութիւնները հարուածելով յեղափոխութեանը՝ հարուածում են միևնոյն ժամանակ իրաւունքներն ու օրէնքները։ Ես սպասում եմ յեղափոխութեան վախճանին, այլ ոչ յեղափոխութիւնը դէմ ուղղված հարուածներին։ Կը սասանեք (?) խաղաղութիւն, պարոն աջակողմեաններ, եթէ դուք կը հարուածէք յեղափոխութիւնը, կը հարուածէք պետութիւնը, այն ժամանակ ձեզնում կը միայ միայն լիակատար քաոս (աղմկալի և երկարատև ծափահարութիւններ ձախակողմում և կենտրոնում)։ Մակլակովը շարունակում է.—Կառավարչական իշխանութիւնը չը պէտք է նմանվի յեղափոխական տերրօրիստներին (ծափահարութիւններ)։ Զախակողմի տերրօրը, անկեղծաբար կասեմ, դաշտային դատարանների հետ համեմատելով աւելի պակաս սարսափելի է։ Տերրօրից կարելի է փախչել, ազատվել, մինչդեռ դաշտային դատարանները դատարանները ոչ այնքան դեկլարացիան է ծառայում, որքան օպպոզիցիայի համերաշխ վերաբերմունքը դէպի Սոսլիպովի հանդէս գալը իր դեկլարացիայով հանդերձ։ «Բեսա» լրագիրը այդ նիստի առիթով հետևեալ կերպով է խօսում.

Պետական Դումայի առաջին մեծ օրը անցաւ՝ մի խոշոր անցքի տպաւորութիւն թողնելով։ Ինչպէս և հարկաւոր էր սպասել այդ օրվայ իսական հերոսները ոչ թէ նրանք էին, որոնք խօսում էին, այլ նրանք, որոնք լուռ մնացին։ Օրվայ հանրական հերոսը Դումայի օպպոզիցիան մեծամասնութիւնն էր, որ ցոյց տուեց իրան բաւական զօրեղ և բաւականին կարգապահ Դումայի գործերին ընթացք տալու ու դեկտատիւռ հաստատելու համար, առանց որևէ պատճառի վտանգի ենթարկելու իրան թէ կողքից և թէ վերից։ Այդ մեծամասնութիւնը իր վարմունքով, իր լռութեամբ աւելի շատ բան ասեց, քան թէ այն մի քանի ճառախօսները, որոնք փորձեցին խօսքերով ասել, որ Դուման պէտք է իրական կռիւ մղէ, այլ ոչ բառերով, որ այդ կռիւը Դուման ձեռնարկում է լուրջ կերպով կշռադատելով իր ոյժերը, և որ իր հակառակորդներին նա չի թողլ տայ էժանագին յաղթութիւն տանել իր դէմ։

*

Միևնոյն կարծիքն է յայտնում և «Товарищъ» լրագիրը.

Հին անպատասխանատու իշխանութիւնը նորից կանգնեց պարլամենտի առջև և նորից պատկերացաւ նրանց միջև եղած անցանելի անդունդը։ Սակայն հանդիպումը այս անգամ բոլորովին ուրիշ էր։ Առաջին Դուման զօրեժիկինեան դեկլարացիային պատասխանեց դայրոյթի արտայայտութեամբ և պահանջելով, որպէս զի անպատասխանատու մինիստրութիւնը անյապաղ հրաժարական տայ, իսկ երկրորդը յանձին իր անգին մեծամասնութեան հանդիպեց և ճանապարհ դրեց պրեմիէր Սոսլիպինի զեկլարացիային ժողովված և կազմակերպված լռութեամբ, և այդ լռութիւնը աւելի ուժեղ և պերճախօս դատապարտութիւն է կառավարութեան համար։ Առաջին Դումայի մարտական ճառերը միշտ կրում են իրանց վրա յուսոյ այն սաղերը, որ համոզմունքների կրակը և խօսքի ոյժը կը հարկադրէ իշխանութիւնը զիջումներ անելու։ Ցոյսի այդ սաղերը չքացաւ և երկրորդ Դումայի, ի դէմս իր ահագին մեծամասնութեան, չը յայտնվեց ապարդիւն հանդառութիւններով անպատասխանատու մինիստրների և նրանց պաշտպան խմբակի հետ, որոնք բաղմել են պարլամենտի աջակողմեան նստարանների վրա։

Լուռ էր երկրորդ Դումայի։ Այս անգամ շատախօսը մինիստրների խորհրդի նախագահն էր, որ 40 րոպէ շարունակ կարդաց դեկլարացիան, իսկ յետոյ էլ մի կրկնոտ ու մեծ վերջաբան։ Որքան մեծազրոյց խօսքեր՝ իրաւական պետութեան մասին, ժողովրդական կեանքի բոլոր մասերում բարենորոգումները մտցնելու համար,—բայց ոչ մի ձայն մահվան պատիժների ու զինւորա-դաշտային դատարանների մասին։ Եւ ինչպիսի խոր ցաւակցութեամբ պէտք է լսէին այդ բարձրամտ խօսքերը երկրորդ Դումայի պատգամաւորները։ Ասենք իրաւական նորմաների, կեանքի խաղաղ վերակազմութեան մասին մինիստրութեան հետ միասին այն ժամանակ, երբ տերրագործում են զինւորա-դաշտային դատարանները, բանտերը լցված են քաղաքական ռազմիկներով, երբ ոչ միայն չեն արձակվում, այլ և նոյնիսկ զարձատվում են ջարդարար նահանգապետները, երբ ճնշումի տակ է մամուլը, ցրում են ժողովները, անլեզու են համարվում այն կուսակցութիւնները, նոյն իսկ այնպիսի չափաւորները, ինչպէս սահմանադրական-ռամկավար կուսակցութիւնը, աքսորվում են այնպիսի խաղաղ պատգամաւորներ, ինչպէս Գրիգոր քահանայ Պետրովը։

*

«Русь» լրագիրը միանում է օպպոզիցիոն մամուլի ընդհանուր համերգին, միայն ցաւ է յայտնում, որ սոցիալ-դեմոկրատական կուսակցութիւնը խախտեց օպպոզիցիայի լրիվ պատասխանի ընդհանուր զօրեղ տպաւորութիւնը։

Օպպոզիցիայի միջուկը դիմացաւ փորձութեանը, և մարտի 6-ին կրկնվեց այն, ինչ որ ուզում էր ասել մարտի 2 ին։ Դրա փոխարէն էս-դեկները արտասովոր եռանդով քննութիւն բռնցին իսկական էս դեկտերի կոչման համար։ Աջակողմեանները իրանց հայհոյանքներով դերազանցեցին պասիւոտական պերճախօսութեան մէջ, իսկ կառավարութեան պարագլուխը ցանկացակի ոգևորութեամբ նկարագրեց մի շատ օրինաչափ թէորիա մինիստրների պատասխանատուութեան մասին պատմութեան առջև։ Դատապարտեալների նստարանները չը կան Դումայում և կառավարութիւնը չի էլ թողլ տայ դնելու, կամ միայն սթոնների կառավարութեան համար,—ասված էր ճառախօսութեան կողմից շատ էֆեկտով,—և մենք չենք հաւատում, որ Դուման հակառակելու լինի խօսքերի համար։ Այո նա չը վիճեց էլ։

Մարտի 6-ի պատմական նշանակութիւնը կայանում է նրանում միայն, որ լսելով մինիստրների պրոգրամը և դիմանալով աջակողմեանների մանուօվրներին ու ձախակողմեան խիզախողներին, Դուման անցաւ հիրթական գործերին։ Հանդիսաւորութեան մասը վերջացել էր հերթական է դառնում հայրենիքի վերածնութեան ծանր, փը շատ ուրիշ, որը, ի հարկէ, զետեղված չէ Սոսլիպինի պրոգրամի շրջանակների մէջ և չէ կարելի վերցնել էս-դեկների յարձակումներով։ Պատմական օրերը դեռ նոր պիտի գան, նրանք նոր են սկսվում։

*

Մարտի 11-ից Թիֆլիսում սկսել է լոյս տեսնել ռուսերէն լրագրով մի շաբաթաթերթ «Грузинская Мысль» անունով, որի խմբագիր-հրատարակիչն է Գ. վ. Գվազաւա։

Առայժմ լոյս է տեսել թերթի առաջին համարը, որի մէջ զետեղված յօդուածներից երևում է, որ թերթի նպատակն է արծարծել ու պաշտպանել Վրաստանի ազատութիւնը պարզապէս։ Վրաստանի հայ հասարակութեան կողմից՝ ծնական ժողովի որոշմամբ, մի խնդրագիր էր ուղարկված Վեհափառ Կաթողիկոսին հանդուցեալ Արիստակէս արքեպիսկոպոսի 6000-ի առիթով, որպէս զի վերջինս յատկացնէ տեղիս նորաբաց թեմական դպրոցին, երբէք յետ ստացվեց նոյն խնդրագիրը Վեհափառի մատագրութեամբ, որ հետևեալն է—որովհետև Մ. Աթոռս ճեմարանը նեութականի մեծ կարիքներ ունի, ուստի ուղարկեցէք այդ 6000-ը, իսկ դրա փոխարէն մի սան կը պահվի ճեմարանում ի յիշատակ հանգուցեալ Արիստակէսի։

Հէնց այդպիսի պատասխան էլ ստացվում էր, որովհետև դժուար էր երևակայել, որ էջմիածինը ձեռքից բաց թողնի մի գումար, որին մի որևէ միջոցով տիրանալ կարող է։

Բայց մեզ զարմացնում էր մի բան, որ մինչ ներկայ պայմաններում կարելի է համամատել ճեմարանը՝ Ատրպատականի նորաբաց թեմական դպրոցի հետ նիւթական վերաբերմամբ։ Ո՛չ, մենք կարծում ենք, որ այդ անել բոլորովին անկարելի է, որովհետև ճեմարանը ներկայացնում է մի հիմնաւոր, կանոնաւոր հաստատութիւն կանգնած ամբողջ ազգի սրտում՝ էջմիածնում իր երեսուն տարվայ փառաւոր անցեալով. նրա հետ կապված է ամբողջ ռուսահայ ժողովուրդը, և այդ այդպէս լինելով, հետևապէս նրա համար գանվել են և գանվում են բարերարներ, կոակողներ Կովկասի և Ռուսաստանի զանազան քաղաքներից։

Վերջապէս՝ նրա անմիջական հսկողն է և գլխին է կանգնած Կաթողիկոսը, որը միջոցներ գտնելու ունի շատ մեծ յարմարութիւններ։

Իսկ ինչ է ներկայացնում տեղիս թեմական դպրոցը իր երկու պատասխանատու դասարաններով։

Ամենից առաջ դեռ շեշտենք այն բանը, որ դպրոցը նոյն իսկ չունի թեմից ընտրված հոգաբարձութիւն, այլ կառավարվում է ժամանակաւոր մանաժողովով, որը ընտրված է մի տարով։ Դալով թեմի օգնութեանը պէտք է ասած, որ նա ամ այժմ բոլորովին անտարբեր է, որովհետև նախ՝ իրանից ընտրված հոգաբարձութիւն չը կայ, երկրորդ՝ չը կայ թեմից ուղարկված ոչ մի աշակերտ. և Ատրպատականը բարոյական իրաւունք էլ չունի նիւթական միջոցներ պահանջելու այն ժողովրդից, որին դեռ մատակից էլ արել ընտրութիւններին։ Մնում է միայն և միայն Ատրպատականը, բայց ինչպէս կարող է միայն Ատրպատականը պահել այնպիսի մի հիմարկութիւն, որը օրեցօր մեծանում, ուռճանում է... մանաւանդ որ ատրպատականցիների առաջ զբաղրոցը դեռ չէ պատկերացել իր մեծութիւնով, առած օգուտներով, որովհետև չէ բոլորել գնէ մի զարգացական շրջան, որպէս զի այդ դպրոցի պտուղները կենդանի կանգնած լինեն ատրպատականցիների առաջ։ Աւելացրէք դրա վրա և այն կարված դիրքը, որ ներկայացնում է Ատրպատականը՝ Կովկասից։ Ո՞ր Կովկասից հարաւում իր գուսարը կը կատակէ Ատրպատականի թեմական դպրոցին, մինչդեռ Կովկասից եկած ուսուցիչները հաղորդում են շարունակ, որ Թիֆլիսեցին կառուցում է ճեմարան, Երևանի թեմ. դպրոցին և ընդհանրապէս։

Ահա այդ դժուարութիւնները և հանգամանքները աչքի առաջ ունենալով էջմիածինը չը պէտք է մերժէր ատրպատականցիների խնդիրը։

Այո, այսօր մերժում է Ատրպատականի նորաբաց թեմական դպրոցին իր շատ փոքր օգնութիւնը հասցնելու, այն էլ ոչ իր սեփական միջոցներից, այլ էջմիածինը, որի ճեմարանը հիմնելու օրից, 30 տարի առաջ Ատրպատականը օգնել է ոչ թէ 6000 ր., այլ 60,000 բուբլիով, և չէ տալիս այն մարգու փողերը, որը ամբողջ 10 տարի տանջվել, աքսել է կորված, հետևաբար Ատրպատականում հէնց միայն նրա համար, որ կանգնեցնէ այդ դպրոց

և ամենադաժան հակառակորդ ու թշնամի էր ամեն մի ազատագրական ժողովրդային շարժման։ Նա իր համոզումներով և ուղղությամբ շատ աւելի խիստ միապետական էր, քան բոլոր միապետները, ուստի և նրա երկրաժայ գործունէութիւնը խիստ չափված ու ձևված կերպով ամբողջապէս լարված էր այն ուղղութեամբ, որ պետութեան մէջ գոյութիւն ունեցող բոլոր գործօնները ուղղված ու դիկավարված լինեն այնպիսի ձևով, որ ամենքին նպաստէ և ամրացնէ միապետական ըէժիմի աւելի ու աւելի հաստատվելու։ Հանգուցեալի ամբողջ տենչն ու ցանկութիւնն էր, որ Ռուսաստանի բոլոր հասարակական հիմնարկութիւնները ամենից առաջ շինեն ու ապրեն միապետական ոգով և եթէ հնարաւոր է, նրանք մի մի կենդանիներ դառնան միապետության խաչքը պահելու համար։ Նա այդ տեսակետով էր մանաւանդ նայում եկեղեցու և ուսումնարանների վրա։ Նրա կարծիքով, թէ եկեղեցին և թէ ուսումնարանը պէտք է մի մի տաճարներ լինէին մանուկներին ու չափահաս ժողովրդին քարոզելու, խաչքի մէջ պահելու համար, իսկ եկեղեցականներն ու ուսուցիչները պէտք է հոգով ու սրտով մի մի ոստիկաններ և միապետության քարոզիչներ լինէին։ Եւ իր այդ բոլոր նպատակին հասնելու համար, Պոբեդոնոսցևը ոչ մի արգելքի առաջ կանգ չէր առնում։ Նրա խստասրտությունը դաժանության էր հասնում և նա անողոք էր դէպի ազատամտությունն ու ազատամիտները։

Շատերը, ի նկատի առնելով նրա՝ Սինոդի օբեր-պրոկուրորության պաշտօնը, ենթադրում են, թէ նա մի շատ հաստատակամ էր։ Բայց դա սխալ է։ Նա շատ աւելի մի չորացած Տարտուֆ էր, քան հաստատակամ։ Եւ նրա Տարտուֆ լինելը շատ հրաշալի կերպով էր պատկերացրել սրանից մօտ 2—3 ամիս առաջ մի խաչացի կարիկատուրիստ։ Նա նկարել էր կմախքի նման չորացած Պոբեդոնոսցևին, կաթսլեի կրծուորի ձևով ձեռքերը կրծքին ծալած՝ վանքի պարտէզում զբօսնելիս, իսկ նրա եակից մի չինովնիկ պաշտօնեայ շունը կարած յայտնում է՝ «մանկան գառապարանները վազը պիտի կախեն, ինչ վերջին կարգադրութիւն ունէք անելու»։ Իսկ Պոբեդոնոսցևը, բոլորովին անվրդով կերպով շարունակելով իր զբօսանքը և առանց ձեռքերը կրծքից հեռացնելու, փոքր ինչ երեսը յետ դարձած, անխռով ձայնով պատասխանում է.

«Վազը կիրակի է, չէ կարելի մարդ կախել, թողէք երկուշաբթի օրվան»։

Այդպես էր իրապէս արտայայտվում Ռուսաստանի «չար գոգան» հաստատակամ լինելը և այդ ծաղրանկարը իսկապէս որ շատ լաւ է բնորոշում հանգուցեալին։

Ռ.

ԴԵԿԼԱՐԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

—

Կարդացվեց վերջապէս բեպրեսիանելով հռչակված մինիստրության հռչակաւոր դեկլարացիան, որ այնչափ անհամբերութեամբ սպասում էր լսելու թէ Ռուսաստանի և թէ քաղաքակիրթ աշխարհի ամբողջ ժողովուրդը։

Այդ դեկլարացիայով Սաբլիպինը ապացուցեց, որ ինքը յիրաւի որ մի շատ «լիբերալ» մինիստր է և որ, ինչ շատ աւելի նշանաւոր է, ինքը, իսկապես, Ռուսաստանի Բիսմարքն է։ Կարդացէք ուշադրութեամբ այդ դեկլարացիան և տեսէք թէ որպիսի գաղութիւն, մրքան աշխատանք է դրած դրված նրա վրա. անշուշտ ամբողջ շաբաթներ, եթէ չասենք ամիսներ է դրած դրել նրա վրա պ. Սաբլիպինը, որպէսզի կարողանայ զէթ թղթի վրա հաշտեցնել միմեանց այնպիսի անհաշտելի դրութիւններ, որոնք իրականութեան մէջ երբէք չեն կարող հաշտվել Իզուր չէ, որ եւրոպական մամուլը, այդ դեկլարացիան լսելով, իսկոյն ասաց, որ Սաբլիպինը մեծ և նշանաւոր դիպլոմատ է, ուստի և Ռուսաստանը (իսկ՝ բիւրոկրատիան ու տիրող դասակարգերը) պէտք է գնահատ է ու ձեռքից բաց չը թողնէ նրան։

Իսկապէս որ մեծ դիպլոմատ է մեր պրոմիէրը։ դուք մէկ աչքով մի նայէք նրա վրա, տեսնէք թէ որպիսի նրբութիւն է նա մտցրել իր դեկլարացիայի մէջ։

Նախ և առաջ Ռուսաստանի անդրանիկ Պետական Դումայի այդ գոհունը, որը սպան ցրելուց յետոյ ամբողջ 7 ամիս համարն Ռուսաստանը Մանջուրիայի պատերազմական դրութեանն էր մատնել և մինչ օրս էլ դեռ շարունակում է նրան այդ դրութեան մէջ պահել, ոչ մի խօսք չէ արտասանում իր ունեցաւ քաղաքականութեան ու ժողովրդին հասցրած արհաւիրքների մասին։ Նա կատարեալ լռութիւն է պահպանում զինուորա-դաշտային ըէժիմի ու սրան զոհ գնացած հազարաւոր անմեղ նահատակների վերաբերեալ։ Նա ոչինչ չէ ասում այն մասին, որ հենց իր ստեղծած այդ ըէժիմի շնորհով Ռուսաստանի ամբողջ ժողովուրդը ծայրից ծայր սուլի է մատնված, որ այդ սուլեաներին անմիջական օգնութիւն հասցնելու համար յատկացված միլիոնները իր սառարբեաների ու օգնականների գրպաններն են մտել անպատիժ կերպով։ Նա չէ խօսում ու չէ բացատրում, թէ ինչ հիման վրա և ինչ իրաւունքով ինքը՝ պ. մինիստրը զանազան «սենատական բացատրութիւններով» բանադրանքի կերպով ազատաղումների ու կրճատումների ենթարկից ժողովրդի արդէն ձեռք բերած ընտրողական իրաւունքը և այդպիսով տատնեակ հազարաւոր մարդկանց զրկից իրանց քաղաքական ամենակատարեալ իրաւունքից։ Նա ոչ մի բառ չէ ասում, թէ ինչպես ինքը՝ պ. մինիստրը մի կողմից բացարձակ դաշնակցութեան մէջ էր մտել «իսկական ռուս մարդկանց» միութեան հետ և ամեն կերպ իրախուսում ու աջակցում էր սրանց ափաշկարա հակասամանադրական և հոգնիսկ ազգասիրական քաղաքականութեանը, իսկ միւս կողմից ամենապարզ լրագրիգրայից էր զրկում նոյնիսկ այնպիսի մի խաղաղ ու բարեմիտ կուսակցութիւն, ինչպիսին կադետների կուսակցութիւնն է։

Պ. Սաբլիպինը, ասում ենք, այդ բոլորի մասին իր դեկլարացիայի մէջ ոչինչ չը խօսեց, նա հարկ չը համարեց իր անցեալ 7 ամսվայ վանդալական քաղաքականութեան մասին որևէ բացատրութիւն տալ։ Եւ այդ բոլորի մասին կատարեալ լռութիւն պահպանելով հանդերձ, պ. մինիստրը եկաւ՝ հենց իր նա իր անպէտք ու վտանգաւոր գոյութիւնը։

«Այս դէպքը կարող է մի մեծ կոզր լինել ձախակողմեանների ձեռքում»։

Կարծես թէ «ձախակողմեանների» ձեռքին քիչ կոզրներ կան բիւրոկրատիայի խայտառակութիւնները, գողութիւններն ու գաղանութիւնները մերկացնելու համար։ Եղել է արդեօք մի գործ, որի մէջ բիւրոկրատիայի մասը խառն եղած լինի և այնտեղ մի որևէ կառաւարօրէն տեղի ունեցած չը լինի։ Գործի ու ձեռնարկութեան մէջ կառաւարում են։ Ինչու՞ Ռուսաստանը միւս պետութիւններից շատ աւելի մեծ դուռ մտրներ է ծախսում իր նստատորմիղի և այլ պատերազմական պարագաների համար, իսկ միշտ էլ մեր նաւերն ու զինուորական գործիքները շատ աւելի վատ տեսակի են դուրս գալիս։ Նաւերը կամ ճեղքուածքներ են տալիս միշտ և կամ պէտք եղած արագաշարժութիւնը չեն ունենում, իսկ թնդանօթների գնդակները կամ երբէք տեղ չեն հասնում և կամ ժամանակից առաջ են պայթում։

Այդպէս են մեր զինուորական գործերը, բայց մթթէ աւելի վատ դրութեան մէջ չեն մեր միւս պետական գործերն ու ձեռնարկութիւնները, նամանաւանդ այն ձեռնարկութիւնները, որտեղ մատակարարական խնդիրներ կան։ Քանի՞ քանի միլիոններ կլանեցին զանազան բարձրատիճան բիւրոկրատներ նոյնիսկ այնպիսի մի գործի մէջ, որպիսին Կարմիր Խաչի ընկերութիւնն էր։ Այն ժամանակ, երբ վիրաւոր ու հիւանդ զինուորները ցրտից դողում էին Մանջուրիայի սառը հիւանդանոցներում, նրանց համար նուիրած Մարօզովի տաք վերմակները զանազան բարձրատիճան բիւրոկրատներ ծոխում էին դալմաների ձեռքով և իրանց, ասանց այն էլ ուռած փորերը ուռցնում։ Իսկ այդ ընկերութեան մատակարարած թղթէ կօշիկները, հոտած կօնսերվները...

Եւ այդ բոլորը, ասում ենք, բիւրոկրատական այն անիծված «էկօնօմիայի» հետևանքն է, որի ետեւիցը կայանում է նրա մէջ, որ պետական գանձարանից այս կամ այն ձեռնարկութեան համար յատկացված գումարի մի խոշոր բաժինը պէտք է սեփական գրպանում պահել, իսկ միւս մասը միայն գործադրել իսկական ձեռնարկութեան վրա։ Եւ այդ սկզբունքով են ղեկավարվում, կրկնում ենք, ոչ միայն բարձրատիճան բիւրոկրատները խոշոր ձեռնարկութիւնների մէջ, այլ և ամենավերջինները և՝ ամենափոքր գործերի մէջ։ Նոյն էկօնօմիան (իմա գողությունը) է տեղի ունենում և հաղորդակցության ճանապարհներ շինելու ժամանակ, և Տարտիկան պալատը ըեմոնտի ենթարկելու դէպքում. նոյնն է կատարվում և սովհարներին մատակարարութիւն հասցնելու դէպքում և ամենավերջին գաւառական զինուորական հիւանդանոցներում, նոյն իսկ բանտերում։ «Էկօնօմիա» է անում մինիսարի օգնական Գուրկոն, «էկօնօմիա» են անում և երկաթուղիներ կառուցանող բիւրոկրատ ինժեներները, պալատներ կառուցանող ու ըեմոնտանող չինովնիկ ճարտարապետները, զինուորական հիւանդանոցների կառավարիչ պետները, բժիշկներն ու վերջին ֆելդշերները, բանտապետները և իրանց ստորադրեալները...

Եւ այդ խայտառակ «էկօնօմիան» ամեն քայլափոխում և ամեն տեղ լույս ցերեկով, ամբարհարա կերպով կատարվելով հանդերձ, պ. Սաբլիպինը ցաւ է յայտնում, թէ Տաւրիկեան պալատի քանդվելը կարող է «մի մեծ» կոզր ծառայել ձախակողմեանների ձեռքում։ Եթէ նա ասէր, թէ այդ դէպքը կարող է «մի աւելորդ» կոզր ծառայել, դա շատ աւելի ճիշտ և տեղին կը լինէր։ Սաբլիպինը իր անվրդով վարմունքով ու արտասանած խօսքերով կատարելապէս հաւատրիմ մեզ թէ իրան և թէ ամբողջ բիւրոկրատիային. այդ մասնաւորապէս նրա միտքը զբաղեցնողը ոչ Տաւրիկեան պալատը ըեմոնտ անող ճարտարապետների ու նրանց վրա հսկող չինովնիկների «էկօնօմիան» էր, ոչ այդ էկօնօմիայի շնորհով պալատի փլչելն էր և ոչ էլ այն սոսկալի ազէտը, որ պիտի պատահէր, եթէ փլուածքը մի քանի ժամով ուշ տեղի ունենար 7-8 ամսվայ ընթացքում հաղարաւոր մարդկանց զինուորա-դաշտային դատարանների միջոցով դնդակահար անել ուղղ մինիսարը այս դէպքում էլ կատարելապէս անխռով մեզ։

Նրա արտասանած՝ «այս դէպքը կարող է մեծ կոզր լինել» և «այն» խօսքերի մէջ ամենայն հանգամանքներով կարելի է հասկանալ ոչ թէ այն, որ հին ըէժիմի և նեղկայ կառավարութեան հակառակորդները «կոզրներ» չունէին իրանց ձեռքում մղվող կռիւը ժողովրդականացնելու համար և այժմ միայն հնարաւորութիւն ունեն օգտվելու այս մի «պատահական» փոփոխութիւնից. ոչ, այդպէս չէր կարող մտածել Սաբլիպինը, որովհետև, ինչպէս ասացինք, նա էլ շատ լաւ գիտէր, որ կոզրները շատ կան օպոզիցիայի ձեռքում բիւրոկրատիայի դէմ կռվելու և նրան մերկացնելու համար։ Ուրեմն...

Կատիլինա

ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԿԵԱՆՔԻՑ

(Նամակ Մոսկվայից, մարտի 6-ին)

X

Քաղաքային ելէքտրաքարշը մինչև օրս չէ վերսկսել իր գործունէութիւնը, այնպէս որ մայրաքաղաքը առանց ելէքտրաքարշի է։ Անցեալ թղթակցութեանս մէջ յայտնել էի, թէ որպիսի անյարմարութիւններ և դժուարութիւններ է առեղծել նա ժողովրդի, մանաւանդ չքաւոր դասակարգի համար։ Տան օրից աւելի է, որ ելէքտրաքարշ չունենք։ Նրա կարիքը ամենազօրեղ կերպով զգալի է մեզ համար։ Քաղաքային վարչութիւնը փորձ արեց նորաւարած մարդկանց միջոցով վերականգնել ելէքտրաքարշի շարժումը, բայց նրա ձեռնարկած բոլոր միջոցները միանգամայն ապարդիւն անցան, քանի որ նա ցանկալի հետևանքները չը տուեց։ Քաղաքային ինքնավարութիւնը սակայն, ինչպէս ցոյց տուեց հասարակութեան, կարծես թէ կամեցաւ մերկ տալ գործադրելին և ամենաօտարի ապագայում վերականգնել ելէքտրաքարշի շարժումը։ Նա կազմել տուեց մի յանձնաժողով, որ պէտք է զբաղվի ելէքտրաքարշի գործադրելով։ Կազմելով յանձնաժողովը, քաղաքային վարչութիւնը, պէտք ասել, որ ամենանեղ ըղձանակի մէջ էր դրել յանձնաժողովի գործունէութիւնը։

Յանձնաժողովը կատարելապէս հաւատացած է, որ ինքը բոլոր բարդութիւնների առաջը կանէր, եթէ քաղաքային վարչութիւնը գործը չը փչացնէր, սահմանափակելով նրա իրաւունքները և յայտնելով, որ նա պէտք է քննէ միայն գործադրելի պատճառները, առանց ի նկատի ունենալու ուրիշ կարևոր հանգամանքներ, որ կարող է սերտ կապ ունենալ գործադրելի պատճառների հետ, առանց այլ հետևանքների հասնելու և այլն...Հէնց այդ նպատակով էլ քաղաքային վարչութիւնը թոյլ չէր տուել բանուորներին քաղաքային շինութիւնների ներսում գումարվել, ուր պէտք է ընտրվէին բանուորների ներկայացուցիչները՝ պարզաբանելու իրանց վիճակը և պահանջները, որի համար գործադրվել են հրաւառակել, որոնք կը կամենային բաւարարված զանել իրանց օրինական պահանջները։

Յանձնաժողովը համակրութեամբ վերաբերվից քաղաքային բոլոր ինժեներների (բացի Կրեպսից) այլ առաջարկին, որով կամեցան պարզել բանուորների նեութական վիճակը, քննել նրանց պատճառները և այսպիսով նրանց դնել նորմալ դրութեան մէջ։ Յանձնաժողովի բոլոր անդամները գտան, որ բանուորներին անհրաժեշտ է առնուազն բարոյական բացատրութիւն տալ, հենց այն պարզ պատճառով, որ բանուորների մեծ մասը գործադուլ է արել ընկերական զգացմունքից դրդված։

Յանձնաժողովը պարզաբանելով գործադուլի պատճառները, եկաւ այն եզրակացութեան, որ նրա գլխաւոր պահանջները կայանում են ելէքտրաքարշը խառնակ կերպով կառավարելու և այն անորոշ դրութեան մէջ, որոնց մէջ գտնվում են քաղաքային ինժեներները։ Այդ անորոշութիւնը կայանում է ոչ միայն ինժեներների փոփոխված յարաբերութեան մէջ, այլ և վերջիններիս ու քաղաքային վարչութեան մէջ։ Գործադուլի ամենամեծ չարիքը կայանում է նրանում, որ ելէքտրաքարշի կառավարիչ, քաղաքային վարչութեան անդամ պ. Զիմնօկով ամենամեծ իրաւունքներ է վայելում, հեռակաւոր կարող է ամեն բան իր կապրիզին ենթարկել. ապա մեզաւոր է նաև ինժեներ պ. Կրեպս, որ նոյն արտօնութիւնն է վայելում և իր արածների համար պատասխանատու է միմիայն պ. Զիմնօկովին։ Ուրեմն, եթէ իրերի այսպիսի անօրմալ դրութեան մէջ տեղի է ունենում գործադուլ,—զարմանալի չէ։ Սա բնական և հասկանալի է։

Ինչպէս ընթերցողը գիտէ, բանուորները պահանջել էին նաև բարձրեր պ. Պուդալովի հեռացումը, բայց յանձնաժողովը քննելով ինժեներների յարաբերութիւնը դէպի բանուորները, գտաւ, որ նրա վրա մեղքեր բարդելը միմիայն թիրիմացութեան արդիւնք է և ուրիշ ոչինչ։ Պ. Պուդալովի, որ ելէքտրաքարշի կառավարութեան գործում հանդէս է գալիս որպէս կոյր գործիք, պարզ է, որ նա չէ կարող անբաւականութիւններ ստեղծել բանուորների մէջ։ Պարզված է այն հանգամանքը, որ հենց ինքը պ. Պուդալով գտնվում էր անօրմալ և անորոշ դրութեան մէջ։

Յանձնաժողովը երկար ու բարակ քննելով ելէքտրաքարշի պատճառները, գտաւ, որ նա առաջ է եկել հետևեալ երկու գլխաւոր հանգամանքներից.—1) որ գործադուլի պատճառը կայանում է ամբողջ ելէքտրաքարշի գործի անկանոնութեան մէջ, այնպէս որ ինժեներների անորոշ դրութիւնն ելնելուց ու քաղաքային վարչութեան միջև եղած փոփոխված յարաբերութիւնը պայմանաւորված է ձեռնարկող ոյժի բացակայութեամբ ընդհանուր գործի մէջ։ Այդ խառնակ և անորոշ վիճակը աւելի ծանր է սորուն ծառայելի համար, որ հնարաւորութիւն չէ տալիս նրանց իր ժամանակին բաւարարութիւն ստանալու եղած կարիքների համար, որը կարելի է միայն իրականացնել հաշտարարական ատեան (примирительная камера) ունենալու դէպքում։ Պէտք է աւելացնել և այն, որ ներկայ գործադուլը քաղաքական ոչ մի ատատ չունի, և 2) յանձնաժողովը, ինժեներներին և բանուորներին հարց ու փորձ ենթարկելուց յետոյ, եկաւ այն եզրակացութեան, որ ելէքտրաքարշի գործունէութիւնը վերականգնել կարելի է միմիայն բանուորների օրինաւոր ճանապարհով բնաբված լիազօրների հետ բանակցելուց յետոյ։

Յանձնաժողովը այդ բովանդակութեամբ մի զեկուցում է տուել քաղաքային վարչությանն, իսկ վերջինս էլ իր կողմից մի ուրիշ զեկուցում է ներկայացրել քաղաքային խորհրդին, որ քննութեան առնվի։

Պէտք է ասել, որ ձիաքարշը, երկի, մասամբ գործում էր, սակայն ամենամեծ դժուարութիւններով։

Քաղաքային վարչութիւնն երկէ հրամայել է իր գործակալներից մէկին, որ գտարկել տայ գործածողների քաղաքային ընկերարանները։

Ի նկատի ունենալով, որ քաղաքային ինժեներները ցանկութիւն էին յայտնել միջնորդի դեր խաղալու քաղաքային վարչութեան և բանուորների մէջ գործադուլը վերջ տալու համար, այդ պատճառով էլ երկէ ինժեներները խորհրդակցելու էին հաւաքվելու Պ. Զեմնօկով (խորհրդակցութեան նախագահ) յայտնել է, որ ինժեներների միջամտութիւնը որոշ հիմունքների վրա պէտք է դրված լինի։ Նա ասաց, որ ինժեներները պէտք է համոզվեն այն բանում, որ Կրեպսի և Պուդալովի արձակումը անհնարին է, որ բանուորների անհատական պահանջները աւելի ուշ պէտք է քննվեն, այսինքն երբ ելէքտրաքարշի գործողությունը կանոնաւոր կը վերականգնվի և բանուորներին ընդունելն ու արձակելը վերապահվում է միմիայն քաղաքային վարչութեան։ Այսուհետև պէտք է աւելացնել և այն հանգամանքը, որ քաղաքային վարչությունը սկզբունքով համաձայն է հաշտարարական ատեան հիմնելուն...

Այսպէս թէ այնպէս ելէքտրաքարշ այսօր էլ չունենք...

XI

Մինչդեռ մայրաքաղաքը անհամբեր սպասում էր ելէքտրաքարշի վերականգնելուն, յանկարծ, ինչպէս կարելի էր սպասել, գործադուլ յայտարարեցին քաղաքային գազային գործարանի բանուորները եւ։

Նրանք, երկէ առաւօտեան դադարեցնելով աշխատանքները, այդ մասին յայտնեցին գործարանի ինժեներին։ Վերջինս մեծ դժուարութեամբ կարողացաւ բացատրել բանուորներին, որ աշխատանքների վերջնական դադարումը կարող է ամենամեծ վնասներ առաջացնել, որ գազային գործարանի ցանցերը կարող են փչանալ և այլն։ Բանուորները համաձայնելով ինժեների արտայայտած այդ կարծիքների հետ, իրանցից մի քանի մարդ թողեցին գործարանում՝ պաշտպանելու վերջինս վնասներից 1/10 մասը միմիայն։

Գործադուլը յայտարարվելուց յետոյ, վաղ առաւօտեան, քաղաքային վարչութեան անդամ Ա. Պետունիկով գործարան է գալիս և ամեն ջանք գործ դնում բանուորներին հաստատելու, որ աշխատանքները չը դադարեցնեն, որ նրանց պահանջները քննութեան կանվեն քաղաքային վարչութեան կողմից։ Նա ցոյց տուեց, որ հասարակական ձեռնարկութիւնների մէջ գործադուլը ոչ մի օգուտ չի տայ բանուորներին, որ նրանք օրէնքի առաջ պատասխանատու են։ Բանուորներին յիշեցրեց նաև, որ գործարանը ֆրանսիական ընկերութիւնից քաղաքին անցնելուց յետոյ, բանուորները սկզբում յաւելումն են ստացել 20,000 ռուբլի, իսկ հոկտեմբերեան գործադուլից յետոյ—45,000 ռ. եւ։ Նա մինչև իսկ յայտնել է, որ իրանց գրութեան մասին ոչ ոքի չեն կարող բողոքել և այլն... Կատարեալ արսուրդ և ծիծաղելի երևոյթ...

Այդ բանից յետոյ բանուորները խորհրդակցութեան են ժողովվում, ուր կայացուում են ըէզօլիւցիա, որով յայտարարում են գործադուլ։ Վերջինս կը տեւի մինչև որ ելէքտրաքարշի բանուորների և իրանց պահանջներին բաւարարութիւն կը տրվի։ Սկզբում սրանք պահանջում էին հեռացնել գործարանի բժիշկ պ. Լեվենսոնին և ծառայող պ. Իսմէլկովին։ այժմ այդ պահանջներից հրաժարվում են, պնդելով, որ անյապաղ բաւարարութիւն տան ելէքտրաքարշի բանուորներին։

Քաղաքային վարչութիւնը մեծ քանակութեամբ գազ ապատոցներին յայտարարել է, որ մինչև գործադուլի վերջանալը նրանք գազ ստանալու են ամենաչափաւոր կերպով։ Նոյն քաղաքային վարչութիւնը մտադիր է այսօրվանից մայրաքաղաքը լուսաւորել նաֆթի ճրագներով, որոնց թիւը 3500 հատ է, և որտեղ բանուորները չեն միացել գործադուլին։ Սակայն ինչով է երաշխաւորում քաղաքային վարչութիւնը, որ նրանք չեն միանայ գործադուլին։ Երէկ երեկոյեան մայրաքաղաքը մթութեան մէջ էր, ոչ մի լապտեր չէր վառված։

Գործադուլը յայտարարելուց անմիջապէս յետոյ, ոստիկանութիւնը, բաղկացած մեծ թիւով ոստիկաններից, եկել է գործարանը պահպանելու նպատակով։ Գործարանի ինժեներները, ի նկատի ունենալով, որ բանուորները իրանց բաւական կօրբէկտ են պահում և ոստիկանութեան ներկայացութիւնը կարող է վախեցնել բանուորներին, միջնորդեցին քաղաքապետի առաջ, որ ոստիկանութիւնը վերցնի, նամանաւանդ որ բանուորները միացել են գործարանում՝ վերջինս պահպանելու նպատակով միմիայն։ Քաղաքապետը յարգելով ինժեներների միջնորդութիւնը, իսկոյն և եթ կարգադրեց ոստիկանական պահպանութիւնը վերցնել գործարանից։

Երկէ քաղաքային վարչութիւնը փորձեց այդ տեսքով ժողով գումարել, բայց բանուորների մի անանուն թերթ, ներկայ լինելու պատճառով, ժողովը չը կայացաւ։

Ոստիկանութիւնն առ այժմ ձերբակալել է մի քանի բանուորների, որոնք մեղադրվում են բանուորների մէջ ապիրատներ մտցնելու համար։

Այսպէս, գազային գործարանի բանուորների գործադուլը սերտ առնչութիւն ունի ելէքտրաքարշի գործադուլի հետ։ Համերաշխութեան նուիրական զգացումնն է թելադրել նրանց գործադուլ յայտարարելու։ Շատ կը վերջանայ արդեօք գործադուլը, այդ ապագայի հարց է, ինչ վերաբերում է առանձնապէս մեզ, կասենք, որ դէպի գործադուլի ժամանակը յոռետեսութեամբ ենք վերաբերվում...

Ռսկու-Զօն

ՊԱՏԿԵՐԱՎԱՆԴԵՍԸ ԶՈՒԲԱԼՈՎԻ ԱՆՈՒՆՈՎ ԿԱՌՈՒՑԱԾ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՆ ՄԷՋ

—

Նկարիչների փոխադարձ օգնութեան ընկերութեան պատկերասանդեսը արդէն 2 շաբաթ է ինչ բացվել է հասարակութեան համար և տեւում է կրկին մի քանի շաբաթ։

Մասնակցում են՝ Բաշինջագեան, Կանդաուրով, Զամմեր, Ցակոբեան, Շուլց, Թերլիմեզեան, Շամշեան, Պարեվսկի, Զանկովսկի, Միրզոյեան և ուրիշներ։ Երկու հարիւրի չափ նկարների թւում կան շատ աջող և գեղարուեստական աշխատութիւններ, կան և թոյլ, և անկատար պատկերներ, ինչպես միշտ և ամեն տեղ։

Ցուցահանդէսը ընդհանրապէս հետաքրքրական է և յանձնում է հասարակութիւնը սիրով։ Տասնեակի չափ երկերը արդէն վաճառված են։

Իբրև առաջնակարգ աշխատութիւններ աչքի են ընկնում. Բաշինջագեանի «Բարեժամի աղջկայքը լուսաբացին», «Լուսնկայ գիշեր բաց ծովի վրա», «Եղիմանեան լճակը», Կանդաուրովի «Լեգենդա», Ցակոբեանի և Թերլեմեզեանի մի քանի էսքիզներ, Շուլցի «Գնչուները», և այլն։

Աւելի ընդարձակ յօդուած կը նուիրենք այս ցուցահանդէսին ուրիշ անգամ։

ԹԱՏՐՕՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

Շաբաթ, մարտի 17-ին, երգչուհի Վան-Բրանդա տալիս է իր հրաժեշտի կօնցերտը արտասանական ընկերութեան դահլիճում։ Տաղանդաւոր երգչուհին, որը անցեալ սեզօնում աչքի ընկնող աջողութիւն ունէր մեր բեմի վրա, այժմ երկար ժամանակով հեռանում է Թիֆլիսից և գնում է արտասահման։ Վան-Բրանդա քիչ ժամանակից յետոյ մի շարք կօնցերտներ կը տայ Սերբիայում, Բելգրադիայում, Բուքարէստում և Զերնօվորիայում, և ապա գաստրօլներ կը տայ Աթէնքի արքայական օպերայում, Պարիզի «Opera comique» թատրոնում և Լօնդոնի Կովենթ-Գարդէն թատրոնում, ուր նա պայման է կապել դեռ անցեալ տարի։ Շատ հաւանական է, որ սկզբ սեզօնից երգչուհի Վան-Բրանդա կը սկսի իր տուրնէն (պատրը) հիւսիսային Ամերիկայում, ուր նա հրաւիրված է 200 գաստրօլների համար ամերիկացի յայտնի իմպրեսարիօ Դրէյի կողմից։

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Շուշի, մարտի 5-ին

Աշոտ սրբազանի կողմից մի տարվայ ընթացքում զանազան պարգևների և պաշտօնների արժանացած կօնսիստորիայի անդամ նորընծայ Եղիշէ քահանայ Թարխանեանցի սուրբ արարմունքների, զեղծումների շնորհիւ ժողովրդի իրաւացի և արդար դայրոյթը տեսնելով ներսէս վարդապետը՝ հարկադրված էր ստիպողական (строгный) հեռագրով Աշոտ սրբազանի կարգադրութիւնը պահանջել, որի հետևանքը լինում է այն, որ հեռացվում է Թարխանեանցը անդամական և գործակալական պաշտօններից։

«Զաւաշարհիկ» Թարխանեանցը դեռ վեց պաշտօն ունի իր «մաքուր ու հզօր» ձեռքերում։ Սրանցից առաջինը՝ և որ գլխաւորն է՝ Թիֆլիսի գպրոցի հոգաբարձու և օրիորդաց դպրոցի հոգաբարձութեան նախագահ լինելն է։

Գրեթէ, բարոյական և օրինական որ հիման վրա ներկայ հոգաբարձութեան կազմերը թոյլ պիտի տան Թարխանեանցին իրանց հետ գործելու, քանի որ նա իր արած զեղծումներով ոչ միայն վարկաբեկ է եղած, այլ վնասել է այն դպրոցին, որի, իբր թէ՝ յաջողությունը, բայց իսկապէս նրա ներկայ ուսուցչական կազմը պահպանելու համար մուրացկանություն կանեն քաղաքներում։

Զէ՞ որ ամեն մի պակի համար հրամանները տալուց՝ յօգուտ ուսումնարանի և աղքատ հոգևորականների որբերի և այրիների նպաստ է ստացվում։ Զէ՞ որ հոգաբարձուները պիտի պահանջեն Թարխանեանցից նրա տուած հրամանների համար ուսումնարանի օգտին ստացած վճարների կրկնապատիկը և այլ ևս երբէք թոյլ չը տան նրան իրանց կազմի մէջ երևալու։

Երկրորդը՝ ըէալական դպրոցում կրօնուսոյց լինելն է, որի մէջ Թարխանեանցը ոչ թէ թոյլ, այլ բոլորովին սաբնդունակ է։

Վերջինիս վրա էլ եթէ աւելացնենք նրա՝ ոչ թէ հոգևորականի, այլ ոստիկանին մարդուն անդամ անվայել արարմունքը—զեղծումները, այնուհետև նա, եթէ գոնէ ամսի զգացում ունի, պիտի իսկոյն հրաժարվի թէ միւս պաշտօններից և թէ ուսուցչական ասպարէզից, որովհետև այլ ևս ոչ մի կերպ նա չէ կարող ազդել դեռ վարուց իրան՝ Թարխանեանցին չը յարգող աշակերտութեան վրա։

Ըէալական ուսումնարանի վարչութիւնը և հոգևոր իշխանութիւնն անշուշտ աչքի առաջ պիտի ունենան այս հանգամանքները։

Իրաւեկ

Բաքու, մարտի 11-ին

Խոնարհաբար խնդրում եմ զետեղել իմ այս նամակը «Ժամանակ» լրագրի № 50 ի մէջ տպագրված է մի յօդուած «Հերսոնները գործում են» վերնագրով, որը միանգամայն զուրկ է ճշմարտությունից։ Իրողությունը եղել է այսպէս։ Մարտի 5 կին, առաւօտեան ժամը 10 ին «Կովկասեան ընկ. Նաֆթանքի» բանուորական կօմիսիան, թւով 4 մարդ, գնում է ինձ, կառավարչս, իրանց ինչ որ նոր պահանջների համար խորհրդակցելու։ Ես խընդրում եմ յետաձգել կօմիսիայի այցելությունը ճաշից յետոյ և առաջարկում՝ նշանակել որոշ ժամեր կօմիսիայի հետ խօսելու համար։ Կօմիսիայի անդամները, չը համաձայնվելով իմ առաջարկության հետ, և չը գիտեմ թէ ինչ հանգամանքներից դրդված, գնում են իսկոյն և եթէ արհեստանոց, յայտարարում գործադուլ և մի քառորդ ժամից յետոյ հաւաքվում գրասենեակի շուրջը, թւով 35 մարդ, որոնցից մէկը գիտում է ինձ և յայտնում, որ, որովհետև ես 1/2 ժամ առաջ չեմ ընդունել կօմիսիայի անդամներին և որովհետև ես չեմ կատարում նրանց պահանջները, պէտք է թողնեմ պաշտօնս և խնդրեմ հեռանամ նաֆթանքից։ Ես պատասխանում եմ, որ բանուորական պահանջներին բաւարարութիւն տալը ինձանից չէ կախված, այլ գլխաւոր վարչությունից, իսկ իմ հեռանալուս մասին ես խոստանում եմ իսկոյն հեռախօսով յայտնել «Կովկասեան նաֆթանքի» գլխաւոր վարչությանն, յետոյ և անմիջապէս հեռանում եմ իմ բնակարանս։

5 րոպէ չանցած, 3 անգիտակից և անձնական շահերից հարբած բանուորներ վարչությունից քարձրանում են վերև՝ դէպի իմ բնակարանս մօտ 25 բանուոր և շշուկով, խայտառակ ոգեւորվով, հոսար ու մի փողոցային յիշողներով և սպառնալիքներով աշխատում են ուժով դուրս քաշել ինձ բնակարանից, որտեղ ես փակված էի, գանվելով պաշտպված դրութեան մէջ։ Տեսնելով որ ուրիշ ելք չը կայ, բացի մահից, ես կնոջս փրկելու համար գիտեմ եմ հեռախօսով իմ բնակարանից ոստիկանութեան, խնդրելով օգնութիւն։ Մինչև ոստիկանութեան գալը ինձ աջողվում է ազատվել բանուորներից, թողնել նաֆթանքը և փախչել դէպի հարևան նաֆթանքը։ Հէնց այդ ժամանակ վրա է հասնում ոստիկանը, գալիս եմ ես հարևան նաֆթանքից մերը՝ պահպանելու խնդրելու, քաղաք գնալու համար։

Քննութեան ժամանակ բռնտարվում են 10 հոգի, որոնցից 4 մարդ անմիջապէս ազատվում են իմ խնդրանքը, իսկ մնացած 6-ը, թէև նստած են բանտում, բայց շուտով բաց կը թողնվեն, որովհետև ես ներում եմ նրանց։ բացի անկարգ բանուորների, հոգում նրանց ազատելու մասին, որոնք մի 2 կեղտոտ, տնա կուսակցական անձնաւորությունների ձեռքին գործիք դառած կատարեցին զրպարտութիւն իմ դէմ։ Իսկ ինչ վերաբերում է տարաբաղդիկ Ալլաֆին ծեծելու հարցին, ես խոստանում եմ, որ զայրացած ժամանակս, երբ յուզված հոգեկան դրութեան մէջ էի գտնվում, ես ինձ թոյլ եմ տուել մի անգամ թաքնվելու, որից իրանարարաբար ներողություն եմ խնդրում լրագրի միջոցով։ Բանուորները կարող են խոստանալ, որ ես երբէք իմ ամբողջ ծառայության ժամանակ չեմ վիրաւորել ոչ գործով և ոչ խօսքով ոչ մի բանուորի։

«Կովկասեան նաֆթանքի» կառավարիչ՝
Լեոն Տէր-Եղիազարեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ադէսեաների օգտին ստացանք. 1)

ընկերութիւն»։ Կանոնադրութեան նախագիծը արդէն մշակված է։ Մօտ օրերս գումարվելու է ընդհանուր ժողով՝ յիշեալ կանոնադրությունը քննելու համար, որ վերջում կը ներկայացվի պատշաճ իշխանութեան՝ ի հաստատութիւն։

—

Մօլոկանութեան տեսակի ինչ որ աղանդ անցեալ տարվայ վերջը մուտք է գործել Բորչալուի գաւառի Ալէքսանդրովկա, Նիկոլայեվկա և Պրիվոլնոյէ գիւղերը։ Ի նկատ առնելով այդ հանգամանքը, Բորչալուի գաւառապետը նշանակել է երկու յատուկ միսիոէրներ, իսկ Վորոնցովկայում, բացի դրանից, երկու միսիոնէրական աշխատակիցներ։

—

Երկաթուղային ժանդարմական ոստիկանական վարչութեան Գանձակի բաժանմունքի կառավարիչ Ա. Ի. Զօզուլէվսկին նշանակված է Թիֆլիսի բաժանմունքի կառավարիչ, իսկ նրա տեղը—վարչութեան ադիւտանտ բոսիսիստը Մ. Պ. Պէրկով։

—

Դեռ անցեալ տարվայ նոյեմբեր ամսվայ սկզբներին Թիֆլիսի քաղաքային վարչութեան լիազօր Ա. Ս. Բաթվը, Պետերբուրգ եղած ժամանակ, խնդրել էր երկաթուղային վարչութեան—յայտնել նրան, թէ ի՞նչ պատճառներով երկաթուղային վարչութիւնը չէ վճարում այն 24,000 ր., որ Թիֆլիս կայարանին կից կառուցված հիւանդանոցի հողաբաժնի դիմաց է։ Այդ առիթով մարտի 12-ին երկաթուղայինվարչութիւնը յայտնել է քաղաքային վարչութեանը, որ անդրկովկասեան երկաթուղիների կառավարչի տեղեկութեան համաձայն, այդ գումարը չէ վճարվել սոսկ այն պատճառով, որ նա օրէնքով սահմանված կարգով չէ ներկայացրել վարչութեանը քաղաքային դումայի որոշումը՝ թէ ընդունում է երկաթուղային վարչութեան առաջարկած պայմանները։ Հէնց որ ներկայացվի դումայի որոշումը, քաղաքը կը ստանայ այդ գործի նկատմամբ նշանակված գումարը։ Պարզվում է, որ ինքը քաղաքային վարչութիւնն է մեղաւոր, որ չէ աշխատել ստանալ յիշեալ 24,000 ռուբլին։

—

Մարտի 11-ի գիշերը X-րդ քաղաքամասի ոստիկանութեան անդամները գիշերվայ ժամը 12-ից յետոյ ձերբակալել են կայարանի մօտ և նրան մերձ ընկած փողոցներում առանց որոշ պարագմունք ունեցող և պրոֆէսիոնալ 18 գրպանահատների, որոնց մօտ եղել են զանազան գործիքներ։ Մէկի մօտ եղել է լօմ, միւսի մօտ—սղոց, երրորդի մօտ—կեղծ թղթադրամներ և այլն...

—

Առ 1-ն փետրվարի Միքայէլեան հիւանդանոցում եղել են 287 հիւանդներ. փետրվար ամսվայ ընթացքում ընդունվել են 248 նորերը՝ առողջացել են 192 հոգի, մեռել են 55-ը և մարտի մօտերը մնացել են ընդամենը 288 հիւանդ։ Բժշկական անմիջական օգնութիւն է հասցրած 190 հիւանդների։ Տեղ չը լինելու պատճառով մերժված է հիւանդանոց ընդունել մօտ 800 հիւանդների։

—

Թիֆլիսի ժամանակաւոր գեներալ նահանգապետը 50-ական ռուբլի տուգանքի է ենթարկել Միքայէլեան փողոցում տուն ունեցող Էմինովին, Նիկոլայեվսկի փողոցում տուն ունեցող Դրօբահեվին—հասցէների սեղանին վերաբերող կանոնները խախտելու համար։

—

Կովկասի թանգարանի և հասարակական գրադարանի վերատեսուչը Թիֆլիսում դիմից քաղաքագլխի պաշտօնակատար իշխ. Զերբեզովին խնդրելով հաղորդել իրան, արդեօք քաղաքային հասարակական ինքնավարութիւնը հնարաւորութիւն չունի՞ յատկացնել յիշեալ թանգարանի և գրադարանի նոր շինութեան համար 1200 քառ. սաժ. ոչ պակաս մի հողաբաժին քաղաքի կենտրոնին մօտիկ, կամ միջոց տալ, որով կարելի լինի ձեռք բերել այդ հողաբաժինը։

—

Մեզ հաղորդում են, որ առաջիկայ ամսի 1-ից (նոր տոմարով) Դանիայի Կոպենհագէն քաղաքում տեղի կունենայ ժամուլի միջազգային ցուցահանդէսը, որը կը տևէ մօտ մի ամիս։ Ցուցահանդէսի կազմակերպողները մտադիր են ունենալ երկրագնդի վրա հրատարակվող պարբերական թերթերի կատարեալ ժողովածու։

—

Օլգինսկի փողոցի բոլոր տնատէրերից, խանութատէրերից և խմիչքների խանութների տէրերից ստորագրութիւններ է հաւաքած, որ երեք օրվայ ընթացքում նրանք կաշխատեն երևան հանել գօրօդօլոյ Գօնչարովին սպանողին և գտնել փողոցում սպանված պահապան Փաշիեվի դիակը։

—

Վլադիկավկազի երկաթուղային վարչութիւնը կարգադրել է Բեսլան և Վլադիկավկազ կայարաններին, որ երբ պահանջ լինի, հարկաւոր աջակցութիւնը ցոյց տրվի գնդ. Լ. Բօրխին, պ.պ. Կուչինսկուն և Վէրգէլիսին, որոնք մտադիր են ելէքտրական գիծ անցկացնել Բեսլանի և Թիֆլիսի միջև։

—

Թիւրիմացութեան տեղիք չը տալու համար, պարտք ենք համարում յայտնել, որ «Մշակ»-ում տպագրված «Դիմում» վերնագրով Ղրիմի հաւերի կոչը Սիմֆերօպոլից էր ուղարկված։

—

Մարտի 10-ին կայացաւ Թիֆլիսում պոլիտեխնիկում հիմնելու հարցով զբաղվող գլխաւոր կոմիտէին կից կազմված ֆինանսական մասնաժողովի նիստը։ Այդ նիստին, ի միջի այլոց, պարզվեց, որ կարելի է ապահովված համարել քաղաքներից և նաւթարդիւնաբերողների համագումարներից ամեն տարի ստացվող 50,000 ռուբլի նպաստը, Թիֆլիս քաղաքի կողմից 100,000 ռուբլի միանուագ օժանդակութիւնը և փոխադարձ վարկի Թիֆլիսի ընկերութեան յատկացրած 10,000 ռուբլի փոխառութիւնը և Թիֆլիսում 200 դես. հողաբաժինը՝ ապագայում պոլիտեխնիկումի շինութիւնը կառուցանելու համար։ Ապա մասնաժողովի անդամներից մի քանիսը ցանկութիւն յայտնեցին, որ ապահովվեն և միանուագ նուէրները. այսպէս՝ Թիֆլիսի փոխադարձ վարկի ընկերութիւնից ստացվելիք 50,000 ռուբլին, Թիֆլիսի առևտրական բանկից—30,000 ռուբլին, եղբ. Մերզոյէվների նաւթ. ընկերութեան կողմից—25,000 ռուբլին և այլն։ Այդ նպատակով մտադրութիւն կայ այդ հաստատութիւնների անդամների ընդհանուր ժողովին ներկայացնել մի առաջարկութիւն և խնդրել՝ վերստին որոշումն կայացնել յանձնելու այդ գումարները։ Ապա, դրամական հաշուետուութիւնից երևաց, որ վերջին ամիսների ընթացքում մանր նուիրատուութիւններ եղել է մօտ 1400 ռուբլի։ Նոյն օրը կայացաւ կրթական մասնաժողովի նիստը։ Այդ նիստում կարդացվեցին այն բոլոր նիւթերը, որոնցով որոշվում է Կովկասի ապագայ բարձր կրթական հաստատութեան տեսակը։ Վճռվեց տպագրել այդ նիւթերը և ձեռնարկել պօլիտեխնիկումի տեսակի հարցի քննութեան՝ գիտութեան զանազան ճիւղերի մասնագէտների մասնակցութեամբ։ Հրաւիրված են քիմիկոսներ—պ. պ. Ալիբեգեան և Կուպցով. ինժեներներ—Ս. Պ. Նովօժէյսկի, Ա. Պ. Բախմետէվ և Վ. Ժ. Պօբեդրիմով. նաւթարդիւնաբերական գործի նկատմամբ—Ի. Գ. Գարասով և Ա. Ի. Գուլէվ. իրաւաբաններից—Կ. Լ. Էմմէրման. գիւղատնտեսական մասի վերաբերութեամբ—Ս. Զ. Միրզոյեվ և Ի. Ի. Ցինամզվարով. գինեգործութեան—Գ. Ի. Գօգօլ-Եանովսկի. բամբակագործութեան—Ն. Պ. Տարատինով և Ֆ. Ա. Շիմանովսկի. ֆիզիքական գիտությունի վերատեսուչ Ս. Վ. Գլասէկ և 2-րդ արական գիմնազիայի վերատեսուչ Ի. Ֆ. Դրբօգլաւ։

—

Երէկ, մարտի 12-ին, Օլգինսկի փողոցի ծայրում, ուր կա գէ առնում ելէքտրաքարշի վագոնը, երեք անյայտ չարագործների արձակած գնդակներից ապակվում է «Գեռնէ» քաղցրավաճառանոցի վարպետ Ալբերտ Բայդմանը։ Մարդասպանները կատարելով սպանութիւնը, ուղղվում են մօտակայ միջանցքի ուղղութեամբ, ուր կանգնած է ընելիզավէտինսկի գնդի մի զօրավարը։ Փախուստի ժամանակ հետապնդում են յիշեալ զօրավարի զինուորները և բռնում են նրանցից մէկին և սկսում են ծեծել նրան։ Այդ պահուն տեղի ժողով անցնելիս է եղել ժանդարմական ուստէր-օֆիցէր Դրօմովը, որը դիմելով զինուորներին, խնդրում է դադարեցնել ծեծը։ Զինուորները վէճի են բռնվում նրա հետ, որից օգտվելով, բռնված չարագործը փախուստի է դիմում, իսկ ժանդարմական ունտէր-օֆիցէր Դրօմովը ձերբակալվում է և ուղարկվում կօմենդանտսկի վարչութիւնը։

—

Կովկասի Փոխարքան, համաձայն Թիֆլիսի նահանգապետի միջնորդութեան, թոյլատրել է յետաձգել 4 ամսով Ախալքալաքի ընտանիքների ցուցակները կազմելը։ Այդ աշխատանքի վախճանը, փոխանակ մարտի 1-ի, նշանակված է յուլիսի 1-ը։

—

Պետերբուրգում Ա. Ս. Պուշկինի արձանը կանգնեցնելու խնդրով զբաղվող մասնաժողովը, որ կազմված է Կայսերական Գիտութեան Ճեմարանին կից, դիմել է Թիֆլիսի նահանգապետին խնդիրքով—յայտնել տեղեկութիւններ բոլոր ռուս երաշտական, դրամատիքական և գրականական ընկերութիւնների մասին, ինչպէս և տեղեկութիւններ հաղորդել նրանց նախագահների մասին, յայտնելով ազգանունները և կոչումները։

—

Վրաց մէջ գրագիտութիւն տարածող ընկերութեան վարչութիւնը մօտ օրերս քննել է, ի միջի այլոց, երկու զեկուցագիր. 1) ամսաթերթի հրատարակելու հարցը և 2) սիստեմատիքաբար վրացերէն լեզուով գրական ժողովածուներ հրատարակելու խնդիրը։ Ամսաթերթի նպատակն է լինելու՝ ծառայել ժողովրդական լուսաւորութեան գործին, տալով ընթերցողին ժողովրդական դպրոցներին, ժողովրդական համալսարաններին, թատրոններին, գրադարան-ընթերցարաններին վերաբերող նիւթեր։ Ամսաթերթում տպագրվելու է նաև վրաց մէջ գրագիտութիւն տարածող ընկերութեան արձանագրութիւնները, ընկերութեան գրքերի ցուցակը և վրացերէն լեզուով նորանոր լոյս տեսնող գրքերի ցուցակը։ Ամսաթերթի հրատարակման հարցը վերջնականապէս կը լուծվի վարչութեան հետևեալ նիստում։ Երկրորդ հարցի նկատմամբ որոշված է անյապաղ կազմակերպել գրական գրուածքների ժողովածուների հրատարակութիւնը։ Ժողովածուների մէջ կը զետեղվին ինքնուրոյն և թարգմանական գրուածքներ (ոտանաւորներ, պատկերներ, դրամաներ և այլն)։

—

Մի խումբ թուրքերի նախաձեռնութեամբ Թիֆլիսում կազմակերպվեց մի ընկերութիւն, որի նպատակն է նիւթական օժանդակութիւն և աջակցութիւն ցոյց տալ հիւանդներին և խեղճերին։ Այդ նպատակը իրագործելու և անհրաժեշտ միջոցներ գտնելու համար ընկերութիւնը ժողովրդական սրճարան է բաց անում։ Ընկերութեան իւրաքանչիւր անդամը տալիս է սրճարանի օգտին 5 ռուբլի և նրա բացումից երեք ամիս յետոյ իրաւունք ունի իր վճարը յետ վերցնել և դուրս գնալ ընկերութիւնից։ Սրճարանի գործերը վարելու համար ընտրվում է 4 անդամից բաղկացած մի մասնաժողով, որը Շաբաթը մէկ անգամ պարտաւոր է իր գործունէութեան մասին հաշիւ տալ Մասնաժողովի անդամները ընտրվում են 2 ամսով։

—

Մարտի 11-ին, կիրակի օրը, սկսվեց Ֆունիկուլիօրի երթևեկութիւնը։ Առաջին օրը բարձրացան և իջան մօտ 1000 մարդ։ Մինչև ֆունիկուլէօր, Երևանեան հրապարակից երթևեկելու են հանրակառքեր, որոնք իւրաքանչիւր նատողից վերցնելու են 5—10 կօպէկ։

—

Մարտի 12-ին, առաւօտեան ժամը 11-ին, Ցիցիանովսկի զառիվայրում ժայռից պոկվեց մի անագին քար և ընկաւ անցնող, Աւստրիայի հպատակ, Մատվէյվիչի գլխին, որը տեղն ու տեղը մեռաւ։ Դիակը ուղարկվեց Մէքսիկեան հիւանդանոցը։

—

Գանձակի գաւառի Զինզագալ գիւղի բնակիչ՝ սպանված Մեհոի Իմամ օղլու ընտանիքի օգտին, գեներալ-նահանգապետ Բաուէրը հրամայել է նոյն գաւառի Զօղախլի գիւղի բնակիչներ Տալիպա Բաղիր օղլուց, Մուսա Բաղիր օղլուց և Հասան-Ղուլի Մօլլա-Սաֆըր օղլուց պահանջել 300 ռուբլի տուգանք։

—

Բութայիսի գաւառի ազնուականների պարապուխ իշխ. Դ. Նիժարաձէի ձեռքով վիրաւորված կապիտան Պաւել Կօզլովը մարտի 6-ին վախճանվել է։

—

Բագուից գրում են «Закавк.»-ին. «Մարտի 9-ից բոլոր առևտրական նաւերում գործադուլ սկսվեց. ներկայացված են պահանջներ, բացառապէս տնտեսական։ Ոչ մի բռնութիւն առ այժմ չէ նկատվել։ Զը նայելով որ գործադուլը, ինչպէս նկատվում է, հանդարտ բնաւորութիւն ունի, այնուամենայնիւ ադմինիստրացիան խիստ հետևում է գործադուլ անողներին և ձեռք է առնում իր միջոցները»։

—

Մարտի 6-ին, Ֆինլանդիայի Կիվինեպէյում վերանորոգված նիստում Պետական Դումայի նախկին անդամ Հերցենշտեյնի սպանութեան վերաբերեալ, վկայ Տրուխաչեվը տուել է սենսացիոն ցուցմունք։ Նրա ասելով, «ռուս մարդկանց դաշնակցութեան» մէջ Հերցենշտեյնի սպանութիւնից առաջ խօսակցութիւն է եղել և Պետական Դումայի նախկին անդամներ Ս. Դ. Զափարիձէի և Իս. Բամիշվիլիի սպանութեան մասին։ («Зак.»)

«Новь» լրագրին հաղորդում են, որ Հերցենշտեյնի սպանութեան մէջ մեղադրվող Համզէյ Համզէյիչը, որ յայտնի է Ա. Պօլոշնով մականունով, մօտ ժամանակներս բանտարկվել էր Կիևում, սակայն Պետերբուրգից ստացված պաշտօնական կարգադրութեան համաձայն նորից ազատ արձակվել է։ Դրանից յետոյ ռուս ժողովրդի դաշնակցութեան Կիևվի մասնաժողովը կարգադրել է նրան գնալ Կիևվի գաւառից Բիլկի գաւառը ագիտացիա անելու նպատակով, որտեղ, ինչպէս յայտնի է, արդէն բուն է հիւսել իր համար յեղափոխութեան դէմ ակտիւ կռիւ մղող խմբակը։ Համզէյ Համզէյիչը ուրիշի անցագրով ազատ շրջում է գաւառում, բացարձակ յայտարարելով, որ ոչ ոք իրան չի բռնտարկի։

—

Պետերբուրգի քաղաքապետի կարգադրութեան համաձայն տեղական բոլոր գործարաններում մշտական ոստիկանական պահակներ են նշանակվել 2 թաղականներից և մի քանի ոստիկաններից բաղկացած, ժողովների ու միտինգների առաջն առնելու համար։ («Новь»)

Հասարակութեան զանազան խաւերում լուրեր են պտտում, որ զինուորական վարչութեան մէջ տեղեկութիւն է ստացվել, որ մեծ զեղծումներ են կատարվել Կուշկայի բերդում։ Ինչպէս ասում են, յանցաւորները յայտնի են և արդէն դատի են ենթարկված։ («Новь»)

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Թաւրիզ, մարտի 13-ին

«Դեռերը ի կորուստ մարդկան են միաբանում»։ Մի քանի ամիս կայ, որ արտասահմանեան թերթերում կարդում ենք կուսակցութեանց համերաշխութեանց մասին. ի հարկէ շատեր կարծում են, որ վերջ ի վերջոյ հայերս խելքի ենք եկել և ուզում ենք անմիաբանութեան սերմը մեր միջից արմատախիլ անել և միացած ուժով կուռել ընդհանուր թշնամու դէմ։ Շատ ցանկալի էր, եթէ այդպէս լինէր։ Դաշնակցութիւնը, որ մի ժամանակ չէր ընդունում հնչակեանների դոյութիւնը, հիմա փորձում է սիրոյ համբոյրներ դրոշել բարեկամի շրթունքներին։ Այդ համերաշխութիւնը ի հարկէ շատ նպաստաւոր էր թէ մէկին և թէ միւսին, բայց վնասակար բուն ժողովրդի շահերին։ «Եռ քո գործերին չեմ խառնվի, դու էլ իմին մի խառնվիր. կամ թէ ականջդ զոցիր, էլ հին տակտիկան մի կողմ թողնենք, ժողովրդի աչքերը բացվել են. մէջք մէջքի տանք, որ չը տապալվինք։

Եւ հնչակեանները՝ որ մի ժամանակ համեմատած դաշնակցականների, գառնուկներ էին, դէն ձգեցին իրանց մորթիները և ատամները սրած գայլերի նման ընկան ժողովրդի ջանին։ Իրաւունք ունէին ասելու. «Այսքան տարի մենք հանգանակութիւն չենք արել, հիմա հերթը մերն է, տուէք». և ծածուկ, առանց աղմուկների կարողացաւ սրանից նրանից 200-ով, 100-ով, 50-ով գոկել։

Իսկ Թաւրիզի ողորմելի հասարակութիւնը առանց ընդդիմանալու տալիս է, ինչ ուզում ես։ Ի՞նչ անեն խեղճերը, երբ չնչին շարժուքիներին շնորհիւ կեանքեր են զոհվում։

Երէկ կարգացինք «Մշակում» Մուշեղ Տէր-Օհանեանի նահատակութեան մասին յայտնված զայրոյթներ. կարդացինք և մոռացանք։ Այդ երիտասարդը տեղացի էր։ Ամբողջ Թաւրիզի հայ հասարակութեան վրա զզուելի տպաւորութիւն թողեց այդ դէպքը. բայց ինչով արտայայտից այդ զզուանքը... ոչնչով։ Դիշեր բարեգործական նպատակով ներկայացում կայ Լիլավա թաղում, մի խումբ օրիորդների և տիկինների նախաձեռնութեամբ և ամենքը խաղաղ սրտով կը գնան այդպիսի ներկայացումներ. ով է հարցնում թէ ո՞ւր են գնում այդ կօպէկները. մինչդեռ Թաւրիզի համարեա բոլոր ազգային հաստատութիւնները մուրացկանութեամբ են ապրում և մուրում են դրրսերից։ Սթափվի՛ր, խեղճ ժողովուրդ...

Իբօ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Յիսուն տարի սրանից առաջ Գերմանիայում լոյս էր տեսնում իւրաքանչիւր տարի միջին թւով մօտ 10,000 գիրք. 90-ական թվականներին այդ թիւը աւելացաւ աւելի քան երկու անգամ, իսկ վերջին ժամանակներս այդ թիւը հասնում է տարեկան համարեա 30,000-ի (1901—1905 թվականները նա հաւասարվում էր 25,300, 26,400, 27,600, 28,900)։ Այդ թիւրի մասին աւելի ճիշտ գաղափար կազմելու համար բաւական է եթէ նրանց համեմատենք ուրիշ զարգացած պետութիւնների թւանշանների հետ։ 1901 թվին, օրինակ, Ֆրանսիայում տպագրվել է 10,000, Անգլիայում՝ 6000, Հիւսիսային Ամերիկայում 7,100, այսինքն այդ երեք պետութիւնները միասին առնելով աւելի քիչ, քան միայն Գերմանիայում։ Միևնոյն ժամանակ Գերմանիայում։ Միևնոյն ժամանակ Գերմանիան միակ երկիրն է աշխարհիս մէջ գրքերի արտահանութեան գործում։ Նա արտահանում է գլխաւորապէս գիտական բովանդակութիւն ունեցող գրքեր տարեկան մօտ 78 միլիոն մարկ արժողութեամբ (ներմուծում է միայն 21 միլիոն), Անգլիան արտահանում է 30 միլիոն, Ֆրանսիան՝ 17 ½ միլիոն, Հիւսիսային Ամերիկան՝ 12 միլիոն Աւստրօ-Ունգարիան՝ 11 միլիոն։ Այս 19-րդ դարի վերջին տասնամեակում աւելացել է փիլիսոփայութեան (100 0/0), գեղարուեստական գրականութեան, առևտրի, արհեստների, ճանապարհների հաղորդակցութեան (5 0/0) վերաբերեալ գրքերը և այլն։ Յետոյ արդէն գալիս են, այսպէս ասած՝ Sammelwerke (այսինքն ընդարձակ հրատարակութիւններ գիտութեան և արուեստի զանազան ճիւղերի վերաբերեալ, որոնց կազմելու գործին մասնակցում են շատ մասնագէտներ), նկարագրութիւններ հողի մասին, աշխարհագրական քարտէզներ (աւելացել է 30—35 0/0, հասարակական և պետական գիտութիւններ, ընդգիտութիւն, ժանկավարժութիւն, գրքեր երիտասարդութեան համար, ինժեներական և ճարտարապետական արուեստի վերաբերեալ գրքեր (20—25 0/0։ Ամենուին չեն աւելացել թէօլօգիայի, բժշկականութեան, լեզուաբանական և գրականութեան պատմութեան գրքերը, իսկ օրացոյցները, հասցէների գրքերը և տարեցոյցները նոյնիսկ պակասել են։ Զը պէտք է մոռացութեան տալ և այն, որ Գերմանիայում պարբերական հրատարակութիւնները անգին չափով զարգացել են և մի տեսակ տարածող են հանդիսանում գրականութեան այն բազմաթիւ նիւթերի վերաբերեալ, որոնք գրավաճառութիւն չունան էին նեսվում։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

12 մարտի

ՏԱՆԺԷՐ, 11 մարտի։ Մարակէշում քարերով քարուքանդ են արել անգլիական հիւպատոսարանի պաշտօնեաների մէկի տունը։ Վնասվածներ չը կան։ Փաշան զինուորական պահակներ է նշանակել օտարազգիների տների և հիւպատոսարանների առաջ։ Ֆրանսիացի Մօշան բժշկի սպանութիւնը կատարվել է մարտի 7-ին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 մարտի։ Կայսրութեան զանազան տեղերից հաղորդում են սպանութիւնների, զինված յարձակումների, կողոպտումների մասին։

ՊԱՐԻԶ, 12 մարտի։ Ներքին գործերի մինիստրութեան մէջ, մինիստր-նախագահի և արտաքին գործերի ու զինուորական մինիստրների խորհրդակցութեան ժամանակ քննվեցին այն միջոցները, որոնցով պէտք է բաւարարութիւն տրվի Մօշան բժշկի սպանութեան խնդրին։—Երեկոյեան Մարօքկօ մեկնեցին «Ժաննա-Դարկ» և «Վալանդ» ականանաւերը։

Այսօր կը կայանայ մինիստրների խորհրդի արտակարգ նիստը՝ Մարօքկոյի դրութեան առիթով։

ՆԻԺԵՐՕԳ, 12 մարտի։ Մանգվայից ստացած տեղեկութիւնների համաձայն նիկարագուացիների զօրքերը գրաւել են Խօլէկու քաղաքը, որ պաշտպանում են Գօնդուրասի և Սան Սալվատորի զօրքերը։ Կօնդուրասի նախագահը ազատվեց նաւով փախչելով։ Նաւեր են ուղարկված նրան հետևելու համար։

ՎԻԵՆՆԱ 12 մարտի։ Լրագիրներին հաղորդում են Բախարէստից, որ Վալախիայում, Ալէքսանդրա քաղաքում տեղի են ունեցել խոշոր հակա-հրէական անկարգութիւններ շատ հրէաներ սպանված են, տանջել-չարչարել են բարբարոսներ։ Հրէաների բոլոր տները և բնակարանները քարուքանդ են եղած։ Ցիրէնցեցում նոյնպէս հակահրէական անկարգութիւններ են. կանչված են զօրքեր։ Եաստայում օրն անցել է հանգիստ։

13 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 մարտի։ Առաջին բէալական դպրոցում, նախասենեակում պայթեց մի պայթուցիկ նիւթ։ Պայթումից յետոյ աշակերտները դուրս գալով դասարաններից կատարեցին քիմիական օրստրուկցիա, իսկ բարձը դասատան աշակերտները սկսեցին թռուցիկներ տարածել՝ հրաւիրելով բօյկոտ յայտարարել դպրոցի վերատեսուչ Վօլկովի դէմ։ Պայթումից ՉԱրտվեցին շատ տպակներ։ Մարդկանց հետ դաբանութիւն չը պատահեց։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 մարտի։ Դատաստանական պալատը, քննելով «Страна»-ի խմբագիրներ Կօվալէվսկու և Իգանիւկովի վճռաբեկ բողոքագիրը, որոնք նահանգական դատարանից դատապարտվել էին երկու շաբաթվայ բանտարկութեան զօրքին վիրաւորանք հասցնելու համար, փոխեց դատավճիռը և գործը դադարեցրեց։

Սկսվեցին ֆինանսների մինիստրութեան կից կազմված առանձին մասնաժողովի նիստերը՝ բանկիր. հաստատութիւններին վերաբերեալ օրինագծերը վերաքննելու համար։ Մասնաժողովը գործում է Ա. Կ. Գօլուբեվի նախագահութեամբ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 մարտի։ Մինիստրների խորհրդի նախագահն ներկայացնելիք ուղերձին ստորագրողների թիւը աճում է աւելի արագութեամբ։ Ընդհանուր թիւը արդէն 10,000 ի է հասել։ Շատերը հեռագրով խնդրում են միացնել իրանց ազգանունները։

ՄՕՍԿՎԱ, 12 մարտի։ Համարեա մէկամսեայ գործադուլից յետոյ բոլոր 48 տպարաններում աշխատանքները վերսկսվեցին։

ԲԵՐԼԻՆ, 12 մարտի։ Երկրորդ անգամ անդամահատութեան ժամանակ Վիսբադէնում վախճանվեց պրոֆէսսոր ֆօն-Բէրգմանը։

ՊՈՐՏՍՄՈՒԹ։ Առաւօտեան տեղ հասաւ և նաւահանգիստ մտաւ ռուսական գործնական նաւախումբը։

ԲԵՐԼԻՆ, 12 մարտի։ Սկսվեց բանկիր Շարլ Միւլլերի սպանութեան մէջ մեղադրվող Տատիանա Լէօնտիէվայի գործի քննութիւնը։ Մեղադրվողը դատարանում հաստատեց արդէն յայտնի իր կենսագրութիւնը և ի միջի այլոց հերքում է, որ ինքը մասնակցութիւն չէ ունեցել գեներալ Տրէպովի կեանքի դէմ եղած դաւադրութեան մէջ։ Լէօնտիէվան յայտնում է, որ յեղափոխական շարժման միացել է Դապօնի ցոյցից յետոյ, մտել է սօցիալիստ-ժաքսիմալիստ-յեղափոխականների ռազմիկ կազմակերպութեան մէջ, սպանել է Միւլլերին, կարծելով թէ սպանում է Դուբնօվային։ Ապա նա յայտնեց, որ շվեյցարական բանտում նրան չարչարեցին այն պատճառով, որ թոյլ չէր տալիս նկարել իրան տասերորդ անգամ։ Նրա խօսքերի համաձայն ինտէրլակի դատաստանական քննիչը և ժանդարմները պոկել են նրա զգեստը, քննիչը բռնել է նրա կոկորդից և սեղմել է նրան պատին, որից յետոյ նա թքել է նրա երեսին և հրաժարվել է պատասխանել արած հարցերին։ Նախագահը յայտնեց, որ կը հարցաքննէ դատաստանական քննիչին և ժանդարմներին։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուզիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱԻ (ՄԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերաբուժութեան, վեներական (սիֆիլիս) մասնաբ. հ.։
Կ. Մ. ԶԻԿ-ՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Մ. Գ. ԱՒԻՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական և վիրաբուժութիւն։
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—1—2 ժ. ներքին և երեխայոց ծաղկախտ.։
Հ. Ի. ԶԶԵԼԻԵՎ—1—2 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՇԵՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանրարձեան։
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ՝ Բ. Նաւասարդեան

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱԶԳԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վեղեմիսովսկայա փողոց № 8.
(Ե. հ. շ.) 36—100

Մի չքաւոր ընտանիք,
որը վերջին հայ-թուրքական ընդհարումներից փախել է Թիֆլիս, բնակվում է մի խոնաւ սենեակի մէջ առանց անկողնի և առանց հագուստի։ Դիմում է բարեգործներին օգնել նիւթապէս։ Նուէրները կարելի է ուղարկել Բեբուտովսկի պերէուլօկ № 12, Ցարութիւն Մարտիրոսեանցին։
1—2

ՍԵՆ-ՍԵՆ
Ծրարը 20 կօպէկ։
Ամերիկան մաստակ և կանգիէներ։
ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
բոլոր դեղատներում և
լաւագոյն խանութներում։
Գլաւոր պահեստն է՝ «Единственная торговля по Американски.
Մի քաղաքեան փող. № 96.
(Կ. չ. ու.) 2—5

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
Մասնագէտ ՆԵՐՔԻՆ և ԵՐԵԽԱՅՈՑ հիւանդութիւնների առանձնապէս ստամոքսի և աղիքների հիւանդութիւններ։ Ընդունելութիւնը ամեն օր 12—1 ժ. առա. և 5—6 երեկ.
Մ. Միխայլովսկի պր. տ. Ցավճանիձէի № 36
86—100

ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ԳՆԱՑՔՆԵՐ
(Թիֆլիսի ժամանակով)
Թիֆլիսից դէպի Բաթում
Պօստատար 1 ժամ 24 ր. ցերեկվայ
Մարդատար 8 » 5 » առաւօտեան
» 11 » 8 » գիշերվայ
Թիֆլիսից դէպի Բաքու
Մարդատար 9 ժամ 13 ր. առաւօտ.
Պօստատար 7 » 48 » երեկոյեան
Մարդ-ապրանք. 11 » 38 » »
Թիֆլիսից դէպի Երևան
Պօստատար 12 ժամ 40 ր. գիշերվա

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Պ. Զախարբէգեանց
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՆԵՐՔԻՆ ԵՒ ՋՂԱՑԻՆ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնը {առաւ. 10—12 ժ.
Տելէֆօն № 1087
Սօլոկ, Լերմօնտովսկայա փող., 16.
(ա. օ.) 118—150

„ԻՐԱՒՈՒՆՔ“
ԼՐԱԳԻՐ, ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
Բուլգարիոյ Վառնա քաղաքին մէջ կը հրատարակվի ամեն չորեքշաբթի և շաբաթ օրեր, զուտ հայկական և անկախ թերթ մը է սա, որ կը շարունակվի անընդհատ տասներկու տարիներէ ի վեր։
Բաժնեգին է Ռուսաստանի և Պարսկաստանի համար 5 ռուբլի կանխիկ։
Հասցէն՝ Redaction du journal «Iravounk» (Bulgarie) Varna։
7—8

Թիֆլիսի նահանգական դատարանին կից երդուեալ հաւատարմատարների և նրանց օգնականների ՀԱՄԱՌՕՐՀՈՒՐԴԸ տալիս է իրաւաբանական խորհուրդներ և կազմում է գործեր։ Զբաւորներին ձրի։ Համախորհուրդը բաց է ամեն օր, բացի տօներից, ցերեկվայ 10—2 ժամը։
2—2

Լոյս տեսաւ
ԴԱՍԱԳԻՐՔ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ
Մասն առաջին, ա. տարի
ԿԱԶՄԵՑ Հ. ՑՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ
Գինը 50 կօպ.
Գումարով գնողներին բաւարար զեղչ։
Դիմել՝ Тифлисъ, Книжный магазинъ «Гуттенбергъ» Г. И. Галустяну. 4—5

Լոյս տեսաւ
ԽԱՆ-ԱԶԱՏ
**„Ի՞ՆՉ Է ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԻՒ